ԱՐՑԱԽԻ ԲՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՅԼ ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐՆ ՈՒ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՑԱԽԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ*

DOI: 10.52174/2579-2989_2024.3-113

Հիմնաբառեր. *Արցախի Հանրապետություն, պատմամշակութային ժառանգություն, բնական ժառանգություն, կրոնական կառույցներ, վանդալիզմ, մշակութային ցեղասպանություն, ՅՈՒՆԵՍԿՕ*

Արցախը պատմական Հայաստանի անբաժանելի մասն է՝ հայկական երկրորդ պետությունը, որը հարուստ է բնական, պատմամշակութային և այլ ռեսուրսներով, որոնք հսկայական զբոսաշրջային ներուժ ունեն: 2020 թ. աշնանը բռնկված պատերազմից հետո, Արցախի տարածքների կորստի հետ մեկտեղ, զրկվեցինք նաև զբոսաշրջային մեծ հարստությունից: 2023 թ. սեպտեմբերին Արցախն ամբողջությամբ հայաթափվեց:

Հոդվածում ներկայացվում են Արցախի բնական, մշակութային, կրոնական ժառանգության որոշ տարրեր, ինչպես նաև Ադրբեջանի կողմից Արցախի պատմամշակութային ժառանգության ոչնչացման փաստեր, որոնց մասին պետք է բարձրաձայնվի տարբեր միջազգային հարթակներում՝ կանխելու Ադրբեջանի մշակութային ցեղասպանության քաղաքականությունը:

Արցախը պատմական Հայաստանի անբաժանելի մասն է՝ հայկական երկրորդ պետությունը, որտեղ վերջին տարիներին զարգանում էր զբոսաշրջությունը, որի համար երկրում առկա են բազում ռեսուրսներ՝ պատմամշակութային, կրոնական, բնական, գաստրոնոմիական և այլն:

Արցախի Հանրապետության (ԱՀ) տարածքը 11432 հազար քառ. կմ է: Այն զբաղեցնում է Մեծ Հայքի Սյունիք, Արցախ, Ուտիք նահանգների տարածքների մի մասը: Ներկայիս ԱՀ տարածքը հիմնականում տեղաբաշխված է պատմական Արցախի գավառների վրա[1]: Եթե Արցախը

* Research for this article was supported by a grant from the National Association for Armenian Studies and Research (NAASR)

[1] Բալայան Վ., Արցախի Հանրապետության բնակավայրերի պատմության ուրվագծեր: Մենագրություն. Եր.: «Զանգակ» հրատ., 2020, էջ 6, http://www.historyofarmenia-am.armin.am/images/menus/2767/Balayan1.pdf.

Գայանե ԹՈՎՄԱՍՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

2010 թ. գերազանցությամբ ավարտել է ՀՊՏՀ-ն՝ կառավարում մասնագիտությամբ: 2014 թ. ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան, 2021 թ.՝ դոցենտի գիտական կոչում:

2016 թ.-ից ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի աշխատակից է:

2016 թ.-ից դասավանդում է ՀՀ ՊԿԱ-ում, 2019 թ.-ից՝ ՀՊՏՀ-ում, 2023 թ.-ից՝ Երևանի պետական համալսարանում և Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանում:

130-ից ավելի գիտական հրապարակումների, այդ թվում՝ ութ մենագրության և երեք ուսումնական ձեռնարկի հեղինակ է և համահեղինակ: Հոդվածներից 15-ը տպագրվել են Scopus և Web of Science շտեմարաններում ընդգրկված ամսագրերում:

ORCID - https://orcid.org/0000-0002-4131-6322

Web of Science ResearcherID: AAH-5677-2021
Scopus Author ID: 56690085600

զբաղեցնում է Հայկական լեռնաշխարհի այս մասի առավելապես լեռնային ու նախալեռնային հատվածը, ապա Ուտիքն ավելի տափաստանային է և ձգվում է մինչև Կուր գետ: Արցախը լեռների մեջ պարփակված գետահովիտների երկիր է[2]:

Իր պատմաքաղաքական կյանքի տարբեր շրջաններում Արցախը տարբեր անուններով է կոչվել՝ *Ադախ, Արցախ, Խաչեն, Արևելք, Արևելից կողմանք, Աղուանից կողմանք, Աղուանք*՝ X-XII դդ., Առան էր կոչվել նույն շրջանում և XIII-XIV դդ., ապա Ղարաբաղ՝ սկսած XIV դարավերջից: «Արցախ» տեղանվան այլ ձևերն էին՝ Արձախ, Արդախ և այլն: Հնչյունական կառուցվածքի տեսանկյունից, սրանք կարող են ծագել ար-դի-ախ նախաձևից, որի բուն իմաստը «ջրառատն» է՝ ար-«ջուր», -դի-«շատ», -ախ-«ջուր»: Հնուց ի վեր Արցախը հայտնի է հանքային և սառնորակ աղբյուրներով: Արցախի տեղանքը խիստ կտրված է բազմաթիվ գետերով, առավելապես՝ Կուրի վտակներով: Արցախի հիմնական հատկանիշներից մեկը ջրառատությունն է, որը համընկնում է «Արցախ» անվան «առատաջուր» իմաստին: Ըստ ժողովրդական ստուգաբանության՝ «Արցախ» անվանումը նշանակում է Առանի ծառաստան: Ավանդության համաձայն՝ Առանը հայոց Վաղարշակ արքայի կողմից նշանակված՝ Մեծ Հայքի հյուսիս-արևելյան նահանգների նախարարն էր՝ Սիսակյան տոհմից: Առանը, որն ավանդաբար համարվել է Առա-նշահիկների և նրանցից տանընդոստած Արցախի միջնադարյան իշխանների ու մելիքների նախահայրը, պատկանում էր Հայկ նահապետի զարմին, ուստի և միջնադարյան պատմիչներն Արցախի իշխաններին կոչում էին «Հայկազուններ»[3]:

Ցավոք, 2020 թ. աշնանը բռնկված պատերազմից հետո, Արցախի տարածքների կորստի հետ մեկտեղ, զրկվեցինք նաև զբոսաշրջային մեծ հարստությունից: 2023 թ. սեպտեմբերին Արցախն ամբողջությամբ հայաթափվեց:

Արցախի Հանրապետությունում պաշտոնապես գրանցված է ավելի քան 4000 հուշարձան, որի տասը տոկոսը՝ նախաքրիստոնեական, մոտ 1,5 տոկոսը՝ մահմեդական, գրեթե 20-ը՝ XIV-XVI դարերի: Մնացածը հայկական քրիստոնեական հուշարձաններ են, որոնք թվագրվում են IV-IX դարերով[4]:

Այժմ ներկայացնենք Արցախի զբոսաշրջային ռեսուրսները՝ պատմամշակութային, բնական, կրոնական և այլն:

Արցախի բնական ժառանգությունը

«Հունոտի կիրճ» բնապատմական արգելոցը Շուշիի շրջանում է: Արցախի բարբառով հոնն արտասանվում է հյուն, հուն: Կիրճը լի է հոնի ծառերով, ինչից էլ առաջացել է արգելոցի անվանումը: Կիրճի աշխարհագրական անվանումն է Կարկառի, քանի որ այստեղով հոսում է Կարկառ գետը, որը սկիզբ է առնում Արցախի լեռնաշղթայի արևելյան լանջերից և թափվում Կուր գետը: Կիրճի 250 մ բարձրությամբ պատերը վեր են խոյանում բերդաքաղաք Շուշիի հարավարևմտյան մասում՝ Կարկառ գետի վրա[5]: Հունոտի և դրա շրջակայքի մոտ 12 ջրաղացների ավերակները վկայում են այստեղի՝ երբեմնի ծաղկուն արդյունաբերության մասին: XIX դարի վերջին և XX դարի սկզբին այս ջրաղացները Շուշի քաղաքին ալյուր մատակարարելու գործում կարևոր դեր են ունեցել:

[2] Պետրոսյան Հ., Մուրադյան Հ., Արցախի մշակութային ժառանգությունը հարձակումների թիրախում, Եր., 2022, էջ 4, https://monumentwatch.org/wp-content/uploads/2022/08/Պետրոսյան-Հ.-Մուրադյան-Հ.-Արցախի-մշակութային-ժառանգությունը-հարձակումների-թիրախում.pdf

[3] Արցախ, թե՞ Ղարաբաղ, https://armland.am/hy/2022/09/24/artsakh-karabakh/

[4] Պետրոսյան Հ., Մուրադյան Հ., Արցախի մշակութային ժառանգությունը հարձակումների թիրախում, Եր., 2022, էջ 20, https://monumentwatch.org/wp-content/uploads/2022/08/Պետրոսյան-Հ.-Մուրադյան-Հ.-Արցախի-մշակութային-ժառանգությունը-հարձակումների-թիրախում.pdf

[5] Հունոտի կիրճ. Արցախի գեղեցկուհիներից մեկը, https://hushardzan.am/archives/11243

Հունոտի քարե կամարաձև կամուրջը կառուցվել է 1720 թ. և մինչ այժմ ծառայում է որպես գետանցման լավագույն միջոց[6]:

Հունոտի կիրճի անկրկնելի զարդերից է ***Մամռոտ քար ջրվեժը,*** որն ավելի հայտնի է «Հովանոցներ» կամ «Ջոնտիկներ» անվանմամբ. հսկա մամուռները բնական անձրևանոցների դեր են կատարում քարերից թափվող սառնորակ ջրերի հաճույքը վայելող զբոսաշրջիկների համար[7]:

Հունոտի կիրճում է գտնվում ***Ալեքսանա Ղուզե քարանձավը*** կամ քարայրային համալիրը՝ Քարին տակ գյուղի հարավ-արևմուտքում, Ջառ գետի ձախ ափին: Քարանձավն ունի մոտ 50 մ խորություն և շուրջ 7 առանձնացված սրահներ: Հելլենիստական դարաշրջանում՝ Ք. ա. I դարից մինչև մ. թ. I դարը քարանձավը ծառայել է որպես հեթանոսական պաշտամունքի վայր: Այսօր արդեն դա Արցախում բնակվող սպիտակաթև չղջիկների միակ հանգրվանն է: Ըստ մասնագետների՝ Ալեքսանա Ղուզեն հազարամյակներ շարունակ մարդկանց համար որպես բնակարան է ծառայել[8]: Շոգ ամռանը քարանձավի ներսում ջերմաստիճանը 10-ից փոքր-ինչ բարձր է, իսկ ձմռանը՝ դրական: Ուշագրավ են բնակավայրից մնացած հետքերն ու ԴՆԹ պահպանումը: Ալեքսանա Ղուզե քարանձավում հայտնաբերվել են օբսիդիանե գործիքներ, իսկ օբսիդիանի ամենամոտ հանքը քարանձավից 30-40 կմ հեռավորության վրա է[9]:

Ավանա Կարան քարանձավը գտնվում է Շուշիի հարավ-արևմուտքում՝ դժվարանցանելի մի վայրում, որը կոչվում է Ավանի քերծ: Քարանձավն ունի մոտ 75 մ խորություն և մինչև 15 մ-ի հասնող լայնություն, իսկ բարձրությունը 7-10 մ է[10]: Ավան հարյուրապետի քարանձավի ուղղահայաց մուտքի մոտ կարելի է տեսնել մարդաշեն հատվածներ, քարե պատեր և այլ կառույցներ: Սրանք տարիներ շարունակ կառուցվել են տարբեր նպատակների համար, քանի որ քարանձավը մարդկանց կողմից օգտագործվել է Ք. ա. 2-րդ հազարամյակից սկսած՝ մինչև XVIII դար[11]:

Ազոխի քարանձավը քարեդարյան հնագույն կովկասյան բնակավայրերից է: Գտնվում է Հադրութի շրջանի Ազոխ և Դրախտիկ գյուղերի միջև: Քարանձավն ունի մուտք և ելք վեց բավիղանման սրահներից, որոնցից ամենամեծի մակերեսը 3000 ք. մ է: Այստեղ հայտնաբերվել են 700.000 տարվա վաղեմության բուսական և կենդանական աշխարհների բրածո մնացորդներ, նախնադարյան արվեստի հետքեր և քարե գործիքներ: Մուտքի մոտ՝ 7 մ խորության վրա հայտնաբերված մուստերյան դարաշրջանի նեանդերթալցու վերին ծնոտի բեկորը հաստատում է այն փաստը, որ Հայաստանի տարածքն անտրոպոգենեզի և մարդու վաղ բնակեցման շրջանի մեջ է[12]: Քարանձավում հայտնաբերվել են 43 տարբեր տեսակի կենդանիների ավելի քան 20000 ոսկորներ, 6000-ից ավելի քարե գործիքներ և այլ իրեր: Թաթար-մոնղոլական արշավանքի տարիներին Ամարասի տերերն այս քարանձավում էին պահում Արցախի նյութական մշակույթի գանձերը[13]:

Արցախի հրաշալիքներից մեկը՝ հսկա

[6] Հունոտի կիրճ, https://www.armgeo.am/hunot-canyon/
[7] Հունոտի կիրճ. Արցախի գեղեցկուհիներից մեկը, https://hushardzan.am/archives/11243
[8] Արցախի սպիտակաթև չղջիկների միակ հանգրվանը, https://hushardzan.am/archives/12360
[9] Արցախի Ալեքսանա Ղուզե քարանձավը նոր հուշարձան է ոչ միայն մեր տարածաշրջանի, այլև Եվրոպայի համար. լեհ մասնագետ, https://artsakhpress.am/arm/news/51690/
[10] Ճանապարհորդություն դեպի Արցախ. վայրեր Շուշիում, որոնց մասին Դուք չգիտեիք, և որոնք անպայման պետք է տեսնել, https://www.orer.am/?p=219936&l=am
[11] Հունոտի կիրճ, https://www.armgeo.am/hunot-canyon/
[12] Ազոխի քարանձավ, http://findarmenia.org/arm/sights/azokh
[13] Ազոխի քարանձավի գաղտնիքները, https://armland.am/hy/2022/09/02/azokhi-qarandzav/

Տնջրի ծառը, Մարտունու շրջանի Սխտորաշեն գյուղում է՝ Ստեփանակերտից 37 կմ հեռավորության վրա: Դա համարվում է ԱՊՀ տարածքում ամենահինն (2040 տարեկան) ու ամենաբարձրը: Ըստ առասպելի՝ ծառը տնկել է Տիգրան Մեծը: Նույն ծառից եղել է 15 ճյուղ ևս՝ նահանգների թվով, բայց բոլորը չորացել են և միայն Արցախինն է ապրել ու մեծացել: Ծառն ունի 44 քառակուսի մետր մակերես, որտեղ կարող է տեղավորվել ավելի քան հարյուր մարդ: Հսկա ծառի շրջանագիծը հիմքում 27 մետր է: Տնջրիի բարձրությունը 54 մետրից ավելի է, սաղարթի ստվերի մակերեսը՝ ավելի քան 1400 քառակուսի մետր: Դարեր շարունակ արցախցիները ծառը սրբացրել են՝ դարձնելով ուխտատեղի: Համարվում էր, որ եթե մարդը փչացնի սուրբ ծառը, ապա նրան կմնա ապրելու ընդամենը յոթ օր: Ժամանակին Ռուսաստանի կայսր Նիկոլայ II-ը նույնիսկ թոշակ է նշանակել ծառի համար: Տարեկան 300 ռուբլու դիմաց՝ մոտակա Սխտորաշեն գյուղի բնակիչները խնամում էին դարավոր ծառը: Այս ծառի շողքի տակ էին հանգըստանում Մեսրոպ Մաշտոցը (V դ.), Մովսես Խորենացին (V դ.), Սայաթ-Նովան (XVIII դ.), Ռաֆֆին և ուրիշներ[14]:

Շահումյանի շրջանում է ***Տաք ջուր*** առողջարանային ավանը՝ 2200-2400 մ բարձրության վրա, Թարթառ գետի ափին, Քարավաճառից դեպի հարավ: Վայրը հարուստ է բնական տաք աղբյուրներով, որոնք ունեն բուժական հատկություններ և բաղադրությամբ նման են Կարլովի Վարիի (Չեխիա) և Ջերմուկի հանքային ջրերին: Մեկ մետրից ավելի խորությամբ՝ կրային նստվածքներից գոյացած այս բնական լողավազանի կենտրոնից ժայթքում է տաք հանքային ջուրը[15]:

Զբոսաշրջային առումով, ոչ պակաս կարևոր նշանակություն ունեին Արցախի հետևյալ լեռները՝ ***Մեծ Քիրս*** (2724 մ), ***Դիզափայտ*** (2478 մ), ***Հայածոր*** (2415 մ), ***Հարավային Ծարասար*** (3403 մ), ***Ծռասար*** (3616 մ), ***Կուսանաց, Զոլասար, Ագռավաքար*** (մոտ 2600 մ), ***Թոփախաչ*** (2011 մ) և

այլն:

Մեծ Քիրս լեռը Իշխանասարի լեռներում է: Դա Արցախի լեռնաշղթայի հարավային մասի ճյուղավորումներից է, որի բարձրությունը 2724 մ է: Բավական արտահայտիչ տեսք ունի, որի շնորհիվ՝ հեռվից առանձնանում է իր վեհությամբ: Լեռան գագաթի հատվածը նման է սեղմված բռունցքի: Քիրս լեռն Արցախի խորհրդանիշներից է և պատկերված է Արցախի զինանշանի վրա՝ երկնագույնով: Դրա մասին հիշատակվում է նաև Արցախի օրհներգում[16]:

Հադրութի շրջանում է գտնվում ***Դիզափայտ լեռը***: Ծովի մակարդակից բարձրությունը 2478 մետր է: Լեռնագագաթից երևում են Արցախի (Մուղանքի) դաշտավայրը, Իրանի սահմանը՝ Արաքսի հովիտը, Զանգեզուրի լեռնաշխարհը, Մռովի կատարները, իսկ ավելի մոտիկից՝ հյուսիսային կողմում, Հարոս լեռնաշղթան է: Բարձունքից երևում են նաև Տումի, Մոխրենես, Հին Թաղեր, Խանձաձոր, Ծամձոր, Քարագլուխ, Սարին Շեն, Բանաձոր, Առաքել, Ցոր, Սարալանջ, Ջրաբերդ, Կարմրաքար գյուղերը: Լեռան հենց կատարին է գտնվում Կատարո վանքը[17]:

Արցախում զարգացման մեծ հեռանկար ուներ նաև էկոզբոսաշրջությունը: 2018 թ. մայիսին ԱՀ կառավարությունը որոշում էր ընդունել ստեղծելու «Կանաչ Արցախ» կենսոլորտային համալիրը և դրանում ներառելու «Կովսական» պետական արգելոցը, «Սոսիների պուրակ» պետական արգելավայրը և «Կաչաղակա-

[14] Արցախի Տնջրի ծառը, https://armland.am/hy/2022/07/06/tnjri/
[15] Շահումյանի շրջանի Ջուարի տաք ջուր, https://aartsakh.wordpress.com/2016/01/07
[16] https://armland.am/hy/2020/05/04/mountqirs/
[17] https://armland.am/hy/2022/09/27/dizapayt-ler/

բերդ» ազգային պարկը: «Կովսական» պետական արգելոցը հիմնադրվել է Քաշաթաղի շրջանի գյուղական համայնքների վարչական սահմաններում՝ պետական սեփականություն հանդիսացող 8961,836 հեկտար տարածքում: «Սոսիների պուրակ» պետական արգելավայրը ստեղծվել է Քաշաթաղի շրջանի Կովսական քաղաքի վարչական սահմաններում՝ պետական սեփականություն հանդիսացող 164,4877 հեկտար տարածքում՝ Ծավ գետի ողողադաշտում հազվագյուտ և անհետացման եզրին գտնվող, վտանգված բույսերի և կենդանիների տեսակների բնականոն զարգացումը, պահպանությունը, պաշտպանությունը, վերականգնումն ու վերարտադրությունը, ինչպես նաև բնական և ռեկրեացիոն ռեսուրսների կայուն օգտագործումն ապահովելու նպատակով[18]:

Արցախի պատմամշակութային ժառանգությունը, բերդերն ու ամրոցները

Հադրութի շրջանի Տող գյուղում է ***«Տողի մելիքական ապարանք» պատմամշակութային արգելոցը:*** Ապարանքը 1737 թ. կառուցել է Դիզակի մելիքության հիմնադիր մելիք Եգանը, որը XVIII դարի առաջին կեսի հայ քաղաքական կյանքի ամենանշանավոր գործիչներից էր[19]: Ապարանքի տարածքում Սուրբ Հովհաննես եկեղեցուց հյուսիս գտնվող միջնադարյան դամբարանադաշտում հնագիտական աշխատանքներ կատարելիս գտնվել են տապանաքարեր, որոնց մեջ կան նաև Դիզակի հայտնի մելիքների տապաններ: Մինչև 1928-1930 թթ.՝ Սուրբ Հովհաննեսը գործող եկեղեցի էր, խորհրդային տարիներին դա վերածվել էր ակումբի՝ կորցնելով հոգևոր նշանակությունը, սակայն պահպանելով գոյությունը: Որպես ակումբ ծառայած տարիներին՝ փոխվել էր եկեղեցու հատակը՝ ծածկվելով փայտով, և կառուցվել էր բեմ: 1989-1990 թթ. փայտե հատակը քանդվել էր, որի տակ հայտնաբերվել էին քանդակազարդ քարերի բեկորներ: Ինչպես պարզվել էր, դրանց մեջ նաև հռչակավոր մելիք Եգանի տապանաքարն էր[20]: Պեղումներից հետո ապարանքը մասնակիորեն վերականգնվել և ամրակայվել էր, բացվել էր նաև թանգարան (2013 թ.), որը գործում էր մելիք Եգանի ընդունարանի շենքում: Թանգարանի հավաքածուն ներկայացնում էր հուշարձանի տարածքում 2011-2013 թթ. պեղումներից հայտնաբերված XVII-XIX դարերով թվագրվող ջնարակապատ անոթներ, մետաղական տարբեր առարկաներ և բաղկացած էր հիմնականում Տող գյուղի և շրջակայքի պատմությունն արտացոլող ցուցանմուշներով: Ցուցադրության մեջ առանձնակի կարևորություն ուներ Տողի Սուրբ Հովհաննես եկեղեցուն պատկանող խաչվառը: 2014 թվականից ի վեր այստեղ էին անցկացվում Արցախյան գինու փառատոները[21]:

Շուշին, որպես մշակութային և հոգևոր քաղաք, առանձնանում էր իր զբոսաշրջային նշանակությամբ: ***Շուշիի բերդը*** հայկական միջնադարյան ամրոց-բնակավայր է: Ենթադրվում է, որ բերդապարսպի և կառույցների հիմքը դրել է հայկական զորախմբերի գլխավոր հրամանատար Ավան հարյուրապետը՝ 1724 թ.: Իսկ ըստ մեկ այլ վարկածի՝ բերդն ավելի վաղ շրջանի կառույց է, և 1720-ականներին Ավան հարյուրապետը պարզապես վերակառուցել և ամրացրել է դա: Անառիկ ամրոցը կառուցված է կրաքարից և ունի 7-8 մ բարձրությամբ կիսաշրջանաձև աշտարակներ:

[18] Արցախի Հանրապետության կառավարության 2018 թ. մայիսի 11-ի N346-Ն որոշում, http://www.arlexis.am/DocumentView.aspx?docid=15354
[19] Տողի մելիքական ապարանքը, https://monumentwatch.org/hy/monument/տողի-մելիքական-ապարանքը/
[20] Արցախում գտնվել են մելիքների տապանաքարեր, https://hushardzan.am/archives/15084
[21] «Տողի մելիքական ապարանք» պատմամշակութային արգելոց-թանգարանը, https://monumentwatch.org/hy/2023/12/14/

1752 թ., երբ հիմնվել է Շուշիի կամ Ղարաբաղի խանությունը, իրեն խան հռչակած Փանահ Ալին նախ՝ բերդը բնակեցրել է թուրքական ցեղերով, ապա Ագուլիսից, Ղազանչիից, Մեղրուց և այլ վայրերից տեղահանված հայ շինականներով և արհեստավորներով: Երբ Շուշին դարձել է նրա նստավայրը, խանը վերակառուցել է դա: Կոտորած և բամաթիվ հարձակումներ տեսած բերդաքաղաքը վերջնականապես ազատագրվել և հայերին էր անցել հայ-ադրբեջանական առաջին պատերազմի ժամանակ: Թեև հակառակորդի կատաղի դիմադրութ-յանը, հայ մարտիկներին հաջողվել էր 1992 թ. մայիսի 8-9-ին ազատագրել հայկական հինավուրց բերդաքաղաքը[22]:

Շուշիում գործում էին 4 պետական և 2 մասնավոր թանգարաններ: ***Կերպարվեստի պետական թանգարանը*** բացվել էր 2013 թ. և ուներ 700-ից ավելի ցուցանմուշներ, որոնք աչքի էին ընկնում աշխարհա գրական բազմազանությամբ: Այստեղ ցուցադրվում էին ոչ միայն Սարյանի, Կուզնեցովի, Մինասի, Նիկողոսյանի, Ժիլինսկու, Սաֆոխինի, Գայանե Թիֆլիսեցու, Հակոբյանի, Գալենցի և այլոց ստեղծագործությունները, այլև Վրաստանի, Ռուսաստանի Լիտվայի, Թուրքմենստանի, Ուզբեկստանի, Լեհաստանի, Ֆրանսիայի, ԱՄՆ-ի, Եթովպիայի, Մոնղոլիայի, Եգիպտոսի, Ինդոնեզիայի, Հայիթիի, Մադագասկարի ու այլ երկրների բազմաթիվ արվեստագետների գործեր: Կերպարվեստի պետական թանգարանի բակում էր գտնվում նաև քանդակների պուրակը, որը ստեղծվել էր 2019 թ.՝ պրոֆ. Գրիգորի Գաբրիելյանցի նախաձեռնությամբ և հայտնի քանդակագործ Վիգեն Ավետիսի ջանքերով[23]:

2014 թ. Շուշիում բացվել էր ***Գրիգորի Գաբրիելյանցի անվան պետական երկրաբանական թանգարանը,*** որտեղ հավաքագրվել էին ամբողջ Արցախից հայտնաբերված տարբեր երկրաբանական գտածոներ՝ հիմնականում հանքանյութեր ու օգտակար բրածոներ: Թանգարանի հավաքածուն բաղկացած էր 700 նմուշից՝ բեր-

ված 48 պետությունից և Ռուսաստանի Դաշնության 20 մարզից, որի հիմնական մասը Գաբրիելյանցի անձնական հավաքածուից էր[24]:

Շուշիի պատմա-երկրագիտական թանգարանը հիմնադրվել էր 1992 թ. և 2014 թ. վերանվանվել ***Շուշի քաղաքի պատմության թանգարան***: Վերջինս ուներ հարուստ ցուցադրություն. նախասրահում ցուցադրվում էին երկրագործական և տնտեսական կյանքը, կենցաղը ներկայացնող գործիքներ և հարմարանքներ՝ լուծ, գութան, բահեր, գերանդիներ, եղան, խնոցի, օրորոց և այլն: Բուն ցուցադրությունը սկսվում էր երկրորդ հարկում՝ ներկայացնելով Շուշիի և շրջակայքի հնագիտական պեղումներից գտնված առակաները՝ մ.թ.ա. II հազարամյակից մինչև ուշ միջնադար: Թանգարանի հավաքածուն բաղկացած էր շուրջ 5000 ցուցանմուշից: Դրանք Շուշիի պեղումների արդյունքում հայտնաբերված հնագիտական իրեր էին, XVIII-XX դարերին վերաբերող ազգագրական բնույթի առարկաներ, ինչպես նաև գրքեր, հրատարակություններ, լուսանկարներ, դրամագիտական հավաքածուներ և այլ վավերագրեր: Առանձին վահանակների վրա ներկայացվում էր Արցախյան առաջին պատերազմի, Ապրիլյան քառօրյա պատերազմի պատմությունը՝ զենքերի, տարաբնույթ վնասազերծված ականների և այլ մասունքների միջոցով: Առանձին արտացոլված էր Շուշիի ազատագրումը, որը տեղի էր ունեցել 1992 թ. մայիսի 8-9-ին: Այս թեմայի շրջանակում ներկայացվում էր նաև

[22] Շուշիի Բերդ, http://www.360greatarmenia.am/hy/shushi-forterss
[23] Շուշիի կերպարվեստի պետական թանգարանը, https://monumentwatch.org/hy/2023/09/12/
[24] Շուշի քաղաքի թանգարաններ, https://arites.am/hy/shushimuseums

«Հարսանիք լեռներում» ռազմական գործողության մանրակերտը[25]:

2013 թ. Շուշիի արվեստի կենտրոնում բացվեց ***Գորգերի թանգարանը,*** որտեղ ներկայացված էին XVII-XX դարերում ստեղծված մոտ 300 ձեռագործ գորգեր՝ որպես արցախյան գորգագործության լավագույն ավանդույթների վկաներ: Թանգարանի մշտական ցուցադրությունը ներառում էր 120 գորգատեսակներ՝ «Վիշապագորգ», «Խնձորեսկ», «Աստղագորգ», «Ծաղկագորգ», «Արծվագորգ», «Ծաղկած խաչեր», «Պատկերագորգ» և այլն[26]:

2018 թ. մայիսի 9-ին Շուշիում բացվեց ***Հայկական դրամի թանգարանը,*** որտեղ ցուցադրվում էին Ծոփքի հայոց թագավորության, Արտաշեսյան տոհմի՝ Տիգրան Մեծի, Արտավազդ 2-րդի, Կիլիկյան Հայաստանի, ռուսական կայսրության և ԽՍՀՄ ժամանակաշրջանների մետաղադրամներ ու թղթադրամներ: Արցախին նվիրված ցուցադրությունը ներառում էր Տիգրանակերտ քաղաքից հայտնաբերված մետաղադրամներ, Շուշիի դրամահատարանում XVIII դարի վերջին և XIX դարի սկզբին հատված արծաթե մետաղադրամներ, ինչպես նաև ՀՀ կենտրոնական բանկի՝ տարբեր տարիներին թողարկած հուշադրամներ՝ նվիրված Արցախին: Թանգարանում ներկայացված էին 700 մետաղադրամ և թղթադրամ, որոնցից ամենահինն Ալեքսանդր Մակեդոնացու արծաթե մետաղադրամն էր, որը գտնվել էր Հայաստանի տարածքից և թվագրվում էր մ.թ.ա. IV դարի վերջին[27]:

«Շուշիի թանգարաններ» ՊՈԱԿ-ի տնօրենի խոսքով՝ 2020 թ. պատերազմի ժամանակ ՊՈԱԿ-ի կազմում ընդգրկված 4 թանգարանից 3-ի ցուցանմուշները տեղափոխվել են ռազմապաստարան, բայց դրանք այդպես էլ չեն տարհանվել: Ըստ ԱՀ կրթության, գիտության և մշակույթի նախարարի՝ ՊՈԱԿ-ների ղեկավարներն իրենք պետք է կազմակերպեին տարհանումը, իսկ նախարարությունը պետք է աջակցեր[28]: Ուստի ադրբեջանական վերահսկողության տակ մնացած թանգարանների ցուցանմուշների ճակատագիրն այդպես էլ պարզ չէ:

Այժմ անդրադառնանք «Տիգրանակերտ» պատմամշակութային արգելոցին, դրա տարածքում գտնվող XVIII դարի ամրոցին ու վերջինիս տարածքում գործող Տիգրանակերտի հնագիտական թանգարանին:

Արցախի Տիգրանակերտն այն 4 նույնանուն քաղաքներից մեկն էր, որ կառուցել էր Տիգրան Մեծ արքան՝ մ. թ. ա. I դարում: Որպես բնակավայր՝ դա գոյություն է ունեցել մինչև ուշ միջնադար՝ Խաչենի իշխանության տարածքում, ինչից ելնելով էլ՝ Խաչենագետի ներքին հովիտը կոչվել է Տիգրանակերտի դաշտ: Տեղի բնակիչները գործածում են նաև «Տկռակերտ» անվանումը: Տիգրանակերտի ճշգրիտ տեղանքը հայտնաբերվել է 2005 թ.-ին՝ Վանքասար սարի լանջին: Տիգրանակերտի դիմաց՝ Խաչենագետի ձախ ափին, նկատվել են մեկ այլ հնավայրի հետքեր: 2006 թ.-ին սկսվել են քաղաքի պեղումները: Արդյունքում գտնվել և ուսումնասիրվել են քաղաքի միջնաբերդը, պարիսպները, կենտրոնական մասը և վաղ միջնադարյան բազիլիկ եկեղեցին: Քաղաքը կառուցված է հիմնականում սպիտակ, մեծ կրաքարերից:

[25] Շուշի քաղաքի պատմության թանգարան, https://monumentwatch.org/hy/2023/07/24/

[26] Շուշիի գորգերի թանգարանում մշտական ցուցադրության է ներկայացված 120 գորգ, https://artsakhpress.am/arm/news/77303/

[27] Շուշիում բացվել է հայկական դրամի թանգարան (լուսանկարներ), https://artsakhpress.am/arm/news/86159/armenian-dram-museum-opened-in-shushi--photos.html

[28] Ինչո՞ւ չեն տարհանվել Շուշիի թանգարանների նմուշները. փոխադարձ մեղադրանքներ և նմուշների անորոշ ապագա: ՏԵՍԱՆՅՈՒԹ, https://factor.am/313291.html

Յուրահատուկ է պարիսպների որմնաքարերի հանգույցների «ծիծեռնակապոչ» ձևը: Պեղումների ամենակարևոր գտածոներից է 2008 թ.-ին հայտնաբերված հայերեն արձանագրությունը[29]: Գետնի տակից հանված կառույցները և նյութերը հավաստում են, որ Տիգրանակերտը եղել է քաղաքաշինական առաջադեմ հատակագծմամբ և շինարարական տեխնիկայով ստեղծված, այգիների մեջ թաղված սպիտակ քաղաք[30], որը, հիմնադրվելով մ. թ. ա. I դարում, հարատևել է մինչև XIV դարը:

XVIII դարի կեսերին «Շահբուլաղ» կոչվող աղբյուրների կողքին ամրոց է կառուցել Արցախի մելիքությունների կատաղի թշնամի Փանահը: Ընդ որում, ամրոցի առաջին շարքերը շարվել են V-VI դարերի բազիլիկ եկեղեցուց բարբարոսաբար պոկված սրբատաշ քարերով: Սակայն, այս ամրոցը շուտով ավերվել է Արցախի մելիքների կողմից: XIX դարի կեսերին ավերակներ այցելած Սարգիս Ջալալյանցի հաղորդմամբ՝ Շահբուլաղ աղբյուրների շրջակայքը հայերը կոչել են Թնգրնակերտ, իսկ պարսիկները՝ Թառնագիրտ, ինչից էլ նա ենթադրել է, որ հենց այստեղ է տեղակայված եղել Տիգրանակերտը[31]: Այդ ամրոցը վերակառուցվել է XX դարում: Ամրոցի ներսում գործում էր Տիգրանակերտի հնագիտական թանգարանը, որտեղ ներկայացված էին պեղումների ժամանակ բացահայտված տարբեր իրեր: Թանգարանի երեք դահլիճում ցուցադրված էին մ. թ. ա. V դարից մինչև մ. թ. XVII դարի պատմական ժամանակաշրջանին վերաբերող մշակույթի յուրահատուկ առարկաներ: Հիմնականում դրանք նրբագեղ կավե անոթներ էին, քարից ու ապակուց պատրաստված առարկաներ: Թանգարանի հավաքածուում առանձնահատուկ հետաքրքրություն էր ներկայացնում V-VI դարերի մոտ 8 սմ տրամագծով կավե սկավառակը, որի մի երեսին՝ շրջանի մեջ, փորագրված էր հավասարաթև խաչ, մյուսին՝ տղամարդու դիմապատկեր՝ հայերեն արձանագրությամբ: Վերջինս Արցախի տարածքում հայտնաբերված հայերեն ամենահին արձանագրություններից մեկն էր[32]:

Ստեփանակերտից մոտ 14 կմ հեռավորության վրա է գտնվում Ասկերանի բերդը, որը երկու կողմից շրջապատված է Կարկառ գետի հովտով և հայտնի է նաև Մայրաբերդ անունով: Բերդն ամրացված է կրկնապարիսպներով և ունի բարձր շրջանաձև աշտարակներ: Ասկերանի ամրոցը կազմված է երկու բաժանմունք-համալիրներից՝ ձախակողմյան՝ հյուսիսարևմտյան և աջակողմյան՝ հարավարևելյան: Ամրոցի պարիսպներն ունեն 2 մ հաստություն և 9 մ բարձրություն: Որպես դիտակետ ծառայող աշտարակներն իրար են միանում նեղ միջանցքներով: Ասկերանը, որպես զորանոց, գոյություն է ունեցել՝ սկսած XVIII դարի կեսերից և կարևոր դեր է խաղացել Շուշիի պաշտպանության գործում: Բերդը մեծ չափով վնասվել է արցախյան պատերազմի տարիներին: Աշտարակներից մեկի վերին հատվածում դեռևս պահպանվում են 1990-ականների պատերազմի հրթիռի բեկորների հետքերը[33]:

Կաչաղակաբերդը, որպես կառույց, պատկանում է VIII դարին: Գտնվում է լեռան գագաթին՝ Պցրետիկ և Քոլատակ գյուղերի միջև: Կաչաղակաբերդի անվան ծագման հետ կապված՝ կա ավանդություն: Ըստ դրա՝ բերդն իր անվանումը ստացել է չափազանց գերիշխող և անմատչելի դիրքի շնորհիվ. դա հասանելի է միայն թռչունների՝ կաչաղակների համար: Տե-

[29] Արցախի Տիգրանակերտ, http://findarmenia.org/arm/sights/tigranakert
[30] Արցախի Տիգրանակերտ, պեղումները, http://www.tigranakert.am/excavations/
[31] Տիգրանակերտը գրավոր աղբյուրներում, http://www.tigranakert.am/city/
[32] Տիգրանակերտի պետական հնագիտական թանգարան, https://hushardzan.am/archives/19854
[33] Ասկերանի բերդ-Մայրաբերդ, https://armland.am/hy/2018/10/18/askeran/

ղացիները Կաչաղակաբերդը կոչում են նաև «Սղսղան», քանի որ բազմաթիվ են դեպքերը, երբ մարդիկ, չհասնելով պարըսպին, սահել են լեռան գագաթից:

Կաչաղակաբերդն արաբական արշավանքների ժամանակ ժայռեղեն կղզուց կառուցապատվել և վերածվել է ամրոցի: Երեք կողմից՝ արևմտյան, արևելյան և հյուսիսային, շրջապատված է 50-60 մ բարձրությամբ հարթ ուղղաձիգ ժայռերով: Բերդի մուտքը հարավային կողմից է, սակայն դա փաստացի գրեթե չի պահպանվել: Առանց մագլցման՝ հնարավոր չէ մուտք գործել Կաչաղակաբերդ: Հնում բերդում եղել են բազմաթիվ գաղտնուղիներ, սրահներ, կացարաններ, կրակատներ՝ քար նետելու համար: Կաչաղակաբերդի կենտրոնական մասում պահպանվել են երկու ժայռափոր ջրամբարներ, ինչը վկայում է այն մասին, որ բերդում հատկանշական տեղ է տրվել ջրամատակարարմանը[34]:

Արցախի կրոնական կառույցները

Քրիստոնեությունն Արցախ է ներթափանցել դեռևս մ. թ. I դարում:

Արցախի Հանրապետությունը հարուստ է կրոնական կառույցներով, որոնք գրավում էին մեծ թվով զբոսաշրջիկների[35]: Ըստ Հայաստանի առաքելական եկեղեցու Արցախի թեմի՝ Արցախում, ընդհանուր առմամբ, կան 423 գործող և խոնարհված, կիսավեր, հիմնավեր եկեղեցիներ, որոնցից՝ Ասկերանի շրջանում՝ 81, Հադրութի շրջանում՝ 62, Մարտակերտի շրջանում՝ 86, Մարտունու շրջանում՝ 64, Շահումյանի շրջանում՝ 61, Շուշիի շրջանում՝ 14, Քաշաթաղի շրջանում՝ 51, Ստեփանակերտում՝ 4 եկեղեցի[36]:

Ներկայացնենք դրանցից մի քանիսը:

❖ ***Դադիվանքը*** գտնվում է Արցախի պատմական Ծար գավառի (Քարվաճառի շրջան) արևելյան կողմում՝ Թարթառ գետի

ձախ ափին: Հիմնադրվել է մ. թ. I դարում՝ քրիստոնեական քարոզչության նպատակով այստեղ եկած և նահատակված Դադիի գերեզմանի վրա: Վանական համալիրի տարածքում պահպանվել է մոտ երեսուն կառույց՝ չորս եկեղեցի, երկու գավիթ, սյունասրահ, զանգակատուն, միաբանական խցեր, հուշարձաններ, աշխարհիկ շինություններ, որոնց հիմնական մասը կառուցվել է Զաքարյանների իշխանության տարիներին: Սուրբ Դադի միանավ բազիլիկ եկեղեցուց պահպանվել են պատերը, որոնք մասամբ հողի մեջ են խրված: Ենթադրաբար, եկեղեցին հիմնվել է IX կամ XIII դարում[37]: Գրեթե բոլոր ուսումնասիրողների կարծիքով՝ Դադիի գերեզմանը կարող է լինել վանքի ամենավաղ կառույց համարվող Դադի եկեղեցու մեջ[38]: Դադիվանքի Կաթողիկե եկեղեցին, որն ըստ արձանագրության, կառուցվել է 1214 թ., հյուսիսարևմտյան անկյունով նույնպես կցված է միանավ եկեղեցուն[39]: Դադիվանքի զանգակատան ներսում գտնվող՝ 1283 թ. կերտված զույգ խաչքարերը քանդակի և գեղարվեստի համաշխարհային գլուխգործոցներ են[40]: 2020 թ. պատերազմից հետո զույգ խաչքարերը բերվել են ՀՀ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին[41]:

❖ ***Ծիծեռնավանքը*** տեղակայված է Քաշաթաղի շրջանի Աղավնո գետի աջ ափին՝ Ծիծեռնավանք գյուղի մոտ: Որոշ կարծիք-

[34] Կաչաղակաբերդ, https://armland.am/hy/2021/06/12/kachaghakaberd-fortress/
[35] Թովմասյան Գ., Կրոնական զբոսաշրջության զարգացման նախադրյալները Արցախի Հանրապետությունում, «ԲԱՆԲԵՐ ՀՊՏՀ», 2019/4, էջ 93-107, https://asue.am/upload/files/science/banber/2019-year-4/2019.4.%207.pdf
[36] Արցախի թեմ, եկեղեցիներ ու վանքեր՝ ըստ շրջանների, https://artsakhdiocese.am/map
[37] Օհանյան Ս. Ն., Դադիվանք. լեռնային երկրի գոհարը, «Տնտեսագետ» ամսագիր, 2017 / N1, Եր., էջ 44-46:
[38] Այվազյան Ս., Դադի վանքի վերականգնումը 1997-2011 թթ., Եր., ՀՃՈՒ հրատ., 2015 թ., էջ 52:
[39] Դադիվանք. Սուրբ Դադիի և նրա գերեզմանի մասին, https://monumentwatch.org/hy/monument/դադիվանք-սուրբ-դադիի-և-նրա-գերեզմանի-մ/
[40] Կարապետյան Ս., Արցախի հրաշալիքները, Եր., ՀՃՈՒ հրատ., 2010, էջ 14:
[41] Թովմասյան Գ., Զբոսաշրջային ռեսուրսների ինչ հարստություն կորցրեց Արցախը, «Ամբերդ» տեղեկագիր, 2020/6, էջ 22-33, https://asue.am/upload/files/amberd/Տեղեկագիր%206.pdf

ների համաձայն՝ դրա տեղում սկզբնապես եղել է հեթանոսական տաճար, որը հենց IV դարում վերածվել է եկեղեցու[42]: Եկեղեցին եռանավ բազիլիկ է, ունի ուղղանկյուն հատակագիծ: Տաճարն ունի արևելքից արևմուտք ձգվածություն: Երկարությունը 25,6, լայնությունը՝ 12,5 մետր է: Եկեղեցու խորանի վերևում կա կամարակապ սրահ, ինչը եզակի է հայկական ճարտարապետության մեջ, բեմում չունի լուսամուտներ, բացակայում են թաղակիր կամարները: Տարածքում կան տարբեր ժամանակաշրջանների մի շարք խաչքարեր և տապանաքարեր: Հյուսիսային պատին պահպանվել է որմնանկարի մի հատված՝ երկու սրբի պատկերով[43]: Վանքն արժեքավոր դեր ունի համայն քրիստոնյա աշխարհի համար, քանի որ այստեղ է պահվում Պետրոս առաքյալի ծիծեռնը (ճկույթը), ինչից էլ՝ «Ծիծեռնավանք» անվանումը: 1633 թ. կառուցվել են Ծիծեռնավանքի պարիսպները՝ կամարակապ մեծ դարպասով, հարավային կողմում՝ սեղանատունը: 1779 թ. եկեղեցին նորոգվել է: Մինչև XX դ.՝ եղել է գործող վանք և մեծ ուխտատեղի, որտեղ Համբարձման և Սուրբ Խաչի տոներին ողջ Սյունիքից ուխտավորներ են այցելել[44]:

❖ ***Կանաչ ժամը*** կամ Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին Շուշի քաղաքում է: Ժամանակին եկեղեցու գմբեթը կանաչ է եղել, որտեղից էլ գալիս է անվանումը: Կառուցվել է 1818 թ.՝ Ղարաբաղցոց նախկին փայտաշեն եկեղեցու փոխարեն, գործել է՝ սկսած 1995 թ.-ից: Ի դեպ, վերջին տարիներին եկեղեցին վերանորոգվել էր[45]: Դա կառուցված է սրբատաշ և կոպտատաշ կաթնագույն կրաքարից՝ խնամքով իրականացված շարվածքով: 2020 թ. պատերազմից անմիջապես հետո Կանաչ ժամը պայթեցվել է: Վնասվել են գմբերթն ու զանգակատունը: 2024 թ. ապրիլի 4-ին արված տիեզերական լուսանկարը վկայում է, որ ադրբեջանցիները հիմնահատակ քանդել են Կանաչ ժամ եկեղեցին[46]:

❖ ***Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ*** եկեղեցին գտնվում է Շուշի քաղաքի կենտրոնում: Հիմնվել է 1868-1887 թթ.՝ Նախիջևանի Ղազանչի գյուղից Շուշի գաղթած բնակիչների միջոցներով: Հայկական ամենամեծ եկեղեցիներից մեկն է (35 մ երկարությամբ, 23 մ լայնությամբ և 35 մ բարձրությամբ), որը կառուցված է սրբատաշ կաթնագույն կրաքարով: Այստեղ էր պահվում ս. Գրիգորիսի Աջը: Եկեղեցին գործել է մինչև 1930 թ.-ը[47]: Խորհրդային շրջանում փակվել է, 1940-ականներին՝ օգտագործվել որպես հացահատիկի պահեստ, 1960-ականների վերջին՝ վերածվել գյուղտեխնիկայի կայանատեղի: 1970-ականներին բարբարոսաբար և միտումնավոր պայթեցումներ ու հրդեհներ են կազմակերպվել եկեղեցու ներսում, եղծվել վավերագրերը[48]: 1988 թ.՝ Շուշիից հայերին արտաքսելուց հետո, ադրբեջանցիները ջարդել են զանգակատան հրեշտակների արձանները և եկեղեցին վերածել զինապահեստի: 1992 թ.-ի մայիսի 8-ին՝ Շուշիի ազատագրումից հետո, շարունակվել է եկեղեցու և զանգակատան նորոգումը, որն

[42] Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999, էջ 143:
[43] Ծիծեռնավանք, Արցախի գանձերը, https://armland.am/hy/2022/09/02/tsitsernavank/
[44] Արցախի գանձերը, Ծիծեռնավանք, https://escs.am/am/news/7336
[45] Շուշի. Կանաչ ժամ կամ Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցի, https://hushardzan.am/archives/11153
[46] Caucasus Heritage Watch, https://twitter.com/CaucasusHW/status/1781024819296833764/photo/1, Ադրբեջանը հիմնահատակ քանդել է Շուշիի Կանաչ ժամ եկեղեցին,https://www.aysor.am/am/news/2024/04/19/
[47] Հասրաթյան Մ., Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցի, http://www.armenianreligion.am/am/Encyclopedia_of_armenian_religion_shushii_ghazanchetsots_s_amenaprkich_yekeghetsi
[48] Շուշիի Ս. Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցին, https://monumentwatch.org/hy/monument/շուշիի-սբ.-ամենափրկիչ-ղազանչեցոց-եկե/

ավարտվել է 1998-ին[49]: Եկեղեցին որոշակի ընդհանրություն ունի Էջմիածնի Մայր տաճարի հետ: Դեռևս պատերազմի ժամանակ՝ 2020 թ. հոկտեմբերի 8-ին, երկու անգամ հրթիռակոծվել է: Շուշին Ադրբեջանին անցնելուց հետո թշնամին պղծել և ջարդել է հրեշտակների արձանները: Շուշիում են գտնվել նաև Ագուլեցոց եկեղեցին (1822 թ.), որի շենքը 1960 թ. ադրբեջանցիները քանդել են և դպրոց կառուցել, Մեղրեցոց եկեղեցին (1838 թ.), որից մնացել է արևելյան պատը, Կուսանաց վանքը (1816 թ.), որն ավերվել է 1960-1970 թթ., Ռուս-հունական եկեղեցին (1830-1970 թթ.), որի տեղում կառուցվել է մշակույթի տուն[50]:

❖ ***Սուրբ Հովհաննես եկեղեցին*** Հադրութի շրջանի Տող գյուղի կենտրոնում է՝ շրջապատված քարե պարսպով: Եկեղեցու ներսում, բակում և շրջակայքում պահպանվել են բազմաթիվ տապանաքարեր: Պատմաբան եպիսկոպոս Մակար Բարխուդարյանի կարծիքով՝ կառույցը պատկանում է XIII դարին: Ինչպես Հայաստանի մի շարք այլ եկեղեցիներ, Սուրբ Հովհաննեսը նույնպես կառուցված է հին հեթանոսական մեհյանի հիմքի վրա: Տեղանքը թեք է, շինության արևմտյան պատը՝ կիսով չափ միաձուլված ժայռի հետ[51]:

❖ ***Սուրբ Աստվածածինն*** Ասկերանի շրջանի Ավետարանոց գյուղի կենտրոնում է: Կառուցվել է 1651 թ.-ին: Հնում եկեղեցում պահվել են ձեռագրեր, մագաղաթյա ավետարաններ, խաչեր և թանկարժեք մասունքներ[52]:

❖ ***Վանքասարի եկեղեցին*** գտնվում է Մարտակերտի շրջանում՝ Ստեփանակերտից Մարտակերտ տանող մայրուղու ձախ կողմում՝ Վանքասար ժայռի ամենաբարձր գագաթի վրա: Կառուցվել է VI-VII դարերում: Դրա տարածքից հիանալի տեսարան է բացվում դեպի լեռներն ու բլուրները[53]: 2020 թ. նոյեմբերին՝ տարածքներն ադրբեջանական վերահսկողության տակ անցնելուց հետո, եկեղեցու գմբեթին՝ անմիջապես խաչի տեղում, տեղադրվել է ադրբեջանական դրոշը[54]:

❖ ***Գանձասարի վանական համալիրը*** գտնվում է Մարտակերտի շրջանի Վանք գյուղի մոտ՝ Գանձասար լեռան վրա: Համաձայն ժողովրդական տեղանվանության՝ լեռը Գանձասար է կոչվել արծաթի, պղնձի և այլ մետաղների հարուստ հանքեր ունենալու համար: Գանձասարի համալիրում են Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին, գավիթը, պարիսպները, բնակելի խցերը, թաղածածկ սեղանատունը, դպրոցի երկհարկանի շենքը, իսկ համալիրից հարավ՝ հին գերեզմանատունը: Եկեղեցին և գավիթը հիմնադրվել են XIII, պարիսպները և սեղանատունը՝ XVII, իսկ դպրոցը՝ XIX դարում: Վանքի գլխավոր հրաշալիքը Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցին է, որի կառուցումը սկսել է 1216 թ.՝ իշխան Հասան Ջալալ Վախթանգյանի նախաձեռնությամբ: Գանձասարը 1400 թ. դարձել է Աղվանից կաթողիկոսության աթոռանիստը: ***Գանձասարում են ամփոփված նաև համաքրիստոնեական ու ազգային սրբերի մասունքներ, որոնցից նշանավո-***

[49] Հասրաթյան Մ., Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցի, http://www.armenianreligion.am/am/Encyclopedia_of_armenian_religion_shushii_ghazanchetsots_s_amenaprkich_yekeghetsi

[50] Мкртчян Ш., Давтян Щ., Шуши город трагической судьбы, Амарас, Ереван, 1997, стр. 18-21.

[51] Սուրբ Հովհաննես եկեղեցի, Տող, ԼՂՀ (Հայաստան), http://www.building.am/arm/buildings-index/surb-hovhannes-church-togh-nkr-armenia/

[52] ԼՂՀ հուշարձանների տեղեկատվական շտեմարան, եկեղեցի Ս. Աստվածածին, http://www.monuments.nkr.am/pages.php?al=home&id=994&act1=more&d=32

[53] Արցախի թոփ 5 չբացահայտված գանձերը. հուշումներ զբոսաշրջիկին, https://armeniasputnik.am/tourism/20180701/12984970/turisti-uxecuyc-artsakh.html

[54] Ադրբեջանը հեռացրել է Վանքասարի եկեղեցու խաչը, https://monumentwatch.org/hy/alerts/ադրբեջանը-հեռացրել-է-վանքասարի-եկեղե/

որը Հովհաննես Մկրտչի գլուխն է[55]**:** Գանձասարի Ս. Հովհաննես Մկրտչի եկեղեցին (1216-1238 թթ.) և գավիթը (1261 թ.) համարվում են հայ ճարտարապետական մտքի հանրագիտարան[56]: 1923 թվականին՝ Արցախ աշխարհին Ադրբեջանին բռնակցվելուց հետո, Գանձասարը չի գործել: 1989 թ. հոկտեմբերի 1-ին Սուրբ Հովհաննես Մկրտիչ տաճարում տեղի է ունեցել երկար սպասված կիրակնօրյա պատարագ: Գանձասարի վանքի շրջակայքում կատաղի մարտեր են ընթացել 1992 թ., երբ Ադրբեջանը պաշարել էր տարածքը: Ադրբեջանական ուղղաթիռների ռմբակոծության հետևանքով թիրախ դարձած եկեղեցին և վանական համալիրի շենքերից մի քանիսը վնասվել են: Գանձասարի վանքը հնարավոր է եղել նորոգել միայն 1993-1997 թթ.: Վանքի նորոգման աշխատանքները շարունակվել էին 2000-ական թթ.՝ հայտնի բարերար Լևոն Հայրապետյանի միջոցներով: Վանքին կից 2015 թ. նոյեմբերին բացվել է Մատենադարանի արցախյան մասնաճյուղը[57]: 2023 թ. սեպտեմբերի 19-21-ի ռազմական գործողությունների հետևանքով Ադրբեջանի վերահսկողության տակ է անցել նաև Գանձասարի վանքը: Նույն թվականի հոկտեմբերի 3-ին Ադրբեջանի մշակույթի նախարարության հուշարձանների պահպանության վարչությունը հայտարարություն է տարածել, ըստ որի՝ հայկական կողմն «օկուպացիայի ժամանակ» իբր վանդալիզմի է ենթարկել Գանձասարի վանքը՝ «անօրինական» վերականգնողական-վերանորոգման շխատանքներ կատարելով, իսկ Գանձասարի վանքի և, մասնավորապես, Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու և գավթի արձանագրություններն իբր կեղծվել ու վերափոխվել են հայերի կողմից[58]:

❖ ***Ամարասի վանքը*** Մարտունու շրջանի Մաճկալաշեն գյուղի մոտակայքում է՝ Խազազ և Լուսավորիչ սարերի միջև ընկած գոգահովտում: Հիմնադրել է Գրիգոր Լուսավորիչը՝ IV դարի սկզբին: Եկեղեցու արևելյան կողմում է թաղված Աղվանքում քրիստոնեություն տարածելուն ուղղված իր առաքելության ընթացքում 338 թ.-ին նահատակված Գրիգորիսը: Ամարասի վանքը կառուցված է հարթ տեղանքում՝ կանոնավոր ուղղանկյուն հատակագծով, 4 անկյուններում շրջանաձև բուրգերով ամրացված բարձր պարիսպներ են, որոնց ներսից ողջ պարագծով՝ կից բնակելի և օժանդակ շինություններ: Երկու բակերից մեկի կենտրոնում Ս. Գրիգորիս եկեղեցին է, որի բեմի տակ՝ Ս. Գրիգորիսի մատուռ-դամբարանը: Պարիսպները բարձր են՝ հատուկ հարմարեցված տանիքներով, որոնք ստեղծված են մարտական նշանակության և պատսպարվելու համար: Պարսպի երկարությունը արևելքից արևմուտք 85 մետր է, լայնությունը՝ 59 մետր, բարձրությունը՝ 5 մետր[59]: V դարի սկզբին Մեսրոպ Մաշտոցը հենց Ամարասի վանքում է բացել Արցախի առաջին դպրոցը: Եկեղեցուն կից կառուցվել են նաև 36 բազմաբնույթ շենքեր: V դարից սկսած՝ Ամարասի վանքը դարձել է երկրամասի խոշոր կրոնական կենտրոնն ու եպիսկոպոսանիստը[60]: XV-XVI դարերում այստեղ գրվել և ընդօրինակվել են բազմաթիվ ձեռագրեր: Ամարասի վանքում թաղված են Սուրբ Զաքարեի և Սուրբ Բարդուղիմեոսի մասունք-

[55] Օհանյան Ս. Ն., Վերծանելով արվեստի գաղտնագրերը: Փիլիսոփայական մտորումներ: Մաս առաջին, Եր., «Տնտեսագետ» ամսագիր, 2017, էջ 27-36:
[56] Կարապետյան Ս., Արցախի հրաշալիքները, Եր., ՀՃՈՒ հրատ., 2010, էջ 16:
[57] Գանձասարի վանքն անկախության տարիներին, https://monumentwatch.org/hy/monument/գանձասարի-վանքն-անկախության-տարիներ/
[58] Գանձասարի բռնայուրացումն սկսված է, https://monumentwatch.org/hy/alerts/գանձասարի-բռնայուրացումն-սկսված-է/
[59] Ամարաս, https://armland.am/hy/2023/11/27/am-amaras-monastery/
[60] Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, գլխ. խմբ. Հովհ. Այվազյան, «Հայկական հանրագիտարան» հրատ., Եր., 2002, էջ 44-45:

ները[61]: 2023 թ. սեպտեմբերի 19-21-ը ադրբեջանական հարձակման հետևանքով սկսված զինված բախումների ընթացքում Ադրբեջանն օկուպացրել է Ամարասի վանքը՝ ժամանակ և հնարավորություն չթողնելով անգամ մասունքների փրկության համար: Այսպիսով՝ վանքն իր նյութական և ոչ նյութական արժեքներով մնացել է թշնամու վերահսկողության տակ[62]:

❖ ***Կատարո վանքը*** գտնվում է Հադրութի շրջանում, ծովի մակերևույթից ավելի քան 2400 մետր բարձրության վրա՝ Դիզափայտ լեռան (2478) գագաթին: Կառուցվել է IV-V դարերում: Եղել է Դիզակ գավառի առաջնորդանիստը: Հայտնի է, որ թշնամիների ձեռքով հրի են մատնվել Դիզափայտի մատուռ-վկայարաններն ու Կատարո վանքը: Հին ու բարեշեն վանքի ավերակները չեն երևում: Ներկայիս եկեղեցին, որը XVII դարի շինություն է, Կատարո վանքի հիմքերի վրա է կառուցված թե ոչ, դժվար է ասել, քանի որ հնի հետքն անգամ չկա: Եկեղեցին ուղղանկյուն է, երկթեք ծածկով, կառուցված կիսամշակ տեղական կայծքարից: Պատերի հարթությունների միապաղաղ ֆոնը խախտվում է միայն փոքր ու նեղ լուսամուտների ճեղքերով: Արևմտյան մասում գտնվող միակ մուտքը կառուցված է մշակված քարից: Համեմատաբար խոր արտաքին որմնակամարը ստեղծում է լույսի ու ստվերի խաղ և դրանով միայն ընդգծում եկեղեցու մուտքը: Միակ դեկորատիվ մասը բարավորի սրբատաշ քարն է[63]: 2020 թ. պատերազմից հետո ադրբեջանցիները ոչնչացրել են վանքին նվիրաբերված հին ու նոր խաչքարերը և դա ներկայացնում են որպես հնագույն աղվանական եկեղեցի[64]:

❖ ***Երից մանկանց վանքը*** (կառուցվել է 1691 թ.) գտնվում է Մարտակերտի շրջանում: Հիմնադիրներն են Մելիք-Իսրայելյանները: Խաչաձև գմբեթակիր եկեղեցին շինված է անտաշ քարերով, սպիտակավուն, ներքուստ չորս քառակուսի սյուներով, բակում կան բնակելի սենյակներ: Եկեղեցու գմբեթը կառուցված է սրբատաշ կաթնագույն քարից: Վանական համալիրի տարածքում պահպանված բազմաթիվ բնակելի սենյակները, վանականների կացարանները, դահլիճներն՝ իրենց բուխարիներով վկայում են Երից մանկանց վանքի միաբանության զգալի թվակազմի մասին: Որպես վանք-ամրոց՝ դա մեծ դեր է խաղացել XVIII դարի սկզբին Արցախում ծավալված ազատագրական պայքարում:

1992 թ. հունիսին՝ Ադրբեջանի կողմից Գյուլիստանի գրավումից հետո, տեղի հայ բնակչությունը (մոտ 14 հազար հոգի) ոտքով ճանապարհվել է դեպի Մարտակերտի շրջան: Այդ խմբից մոտ 2-3 հազարն ապաստան է գտել Երից մանկանց վանքի տարածքում՝ մինչև օգնական խմբերի ժամանումը: Արցախյան առաջին պատերազմից հետո մեկնարկել էին վանքի մասնակի վերականգնման աշխատանքները: Դեռևս շարունակվում էր եկեղեցու տանիքի սալերի նորոգման և ճակատների ամրացման գործընթացը[65]:

❖ ***Եղիշե առաքյալի վանքը*** գտնվում է Մարտակերտի շրջանում՝ Մատաղիս գյուղից հյուսիս, հայ-ադրբեջանական շփման գծի մոտ, անտառապատ լեռան լանջին: Մոտակայքում Ջրվշտիկ ջրվեժն է: Կառուցվել է V դարում՝ Աղվանից արքա Վաչագանի կողմից: Այստեղ են ամփոփվել Սուրբ Եղիշեի մասունքները: Փոքրիկ եկեղեցու երկու կողմում կառուցված է յոթ մատուռ: Դրանցից մեկը Վաչագան Բարեպաշտի դամբարանն է՝ կառուցված 1286 թ.-ին: Վանքում է գտնվում նաև Ջրաբերդի XVIII դարի իշխան Մելիք Ադամի հանգստարանը: Վանական համալիրը բաղկացած է եկեղեցուց, գավթից, յոթ մատուռից, գերեզմանատնից և այլ օժանդակ շինություններից, որոնք կառուցվել են XIII-XVIII դդ. ընթացքում: Վանքը եղել է դպրության և

[61] Կրոնական, https://karabakh.travel/hy/religious/36/
[62] Ամարասի վանքն օկուպացված է. Ադրբեջանը պարտավոր է պահպանել օկուպացված տարածքներում մշակութային ժառանգության պահպանության միջազգային դրույթները, https://monumentwatch.org/hy/alerts/ամարասի-վանքն-օկուպացված-է.-ադրբեջան/
[63] Գանձասարի վանքն անկախության տարիներին, https://monumentwatch.org/hy/monument/գանձասարի-վանքն-անկախության-տարիներ/
[64] Գանձասարի բռնայուրացումն սկսված է, https://monumentwatch.org/hy/alerts/գանձասարի-բռնայուրացումն-սկսված-է/
[65] Ամարաս, https://armland.am/hy/2023/11/27/am-amaras-monastery/

գրչության կենտրոն, որտեղ ընդօրինակվել են տարաբնույթ արժեքավոր ձեռագրեր: Ժողովրդական ավանդազրույցը Վաչագան Բարեպաշտ թագավորի և Անահիտ թագուհու անունների հետ է կապում Ջրվշտիկ վանքի արևմտյան կողմում գտնըվող աղբյուրը, իսկ վանքի բակի խաչաքանդակ տապանաքարը համարում է Անահիտի գերեզմանը: XVIII դարում Ջրվշտիկ վանքը եղել է հայ ազգային-ազատագրական պայքարի կենտրոններից[66]:

❖ ***Սուրբ Ստեփանոսը*** Հադրութի շրջանի Տող գյուղի հարավարևմտյան մասում է: Կառուցվել է միջնադարյան մայր տաճարի տեղում, որն էլ, իր հերթին, պատմիչների վկայությամբ, հիմնադրվել էր հեթանոսական տաճարի հիմքի վրա: Միջնադարյան եկեղեցու գոյության մասին վկայում են ապսիդի քարի շարվածքի տակ երևացող գմբեթավոր եկեղեցու պատերի հիմքերը: Բացի այդ, հին կառույցի հետքերը կարելի է տեսնել եկեղեցու հարավային պատի տակ: Եկեղեցին 1747 թ. վերանորոգել են մելիք Եգանը և նրա որդի մելիք Եսային: Սուրբ Ստեփանոս եկեղեցին ուղղանկյուն կամարակապ դահլիճ է: Պատերը կառուցված են կոպտատաշ քարերից, որոնք մնացել են քանդված եկեղեցուց: Արտասովոր ձև ունեցող քանդակազարդ սյունը դահլիճը բաժանում է երկու անհավասար մասերի: Նեղ մասում բազմաթիվ գերեզմանաքարեր կան, իսկ պատերի մեջ տեղադրված է խաչքարերի յուրահատուկ հավաքածու (51 հատ)[67]:

❖ ***Գտչավանք*** (Գտիչի վանք) ***վանական համալիրը*** (XIII դար) գտնվում է Տող գյուղի վարչական տարածքում՝ Տողասար կամ Ճգնավորի լեռան հյուսիսարևմտյան լանջի գոգավորությունում: Գտչավանքը դեռևս վաղնջական ժամանակներից եղել է քաղաքական և հոգևոր կենտրոն, հիշատակվում է նաև որպես եպիսկոպոսանիստ: Ներկայիս վանքի տեղում եղել է հնագույն ժամանակներում կառուցված վանք, որն ավերվել է արաբական տիրապետության ժամանակաշրջանում: Այս փաստը հաստատում են նաև տեղում պահպանված իրեղեն նյութերը: Հին շենքերի հիմքերի վրա կառուցվել է Գտչավանքի գլխավոր եկեղեցին[68]: Վանքի անունով Գտիչ է կոչվել դրանից վերև կառուցված ամրոցը, որը IX դարում Եսայի Ապու-Մուսեի նստավայրն էր: XIII դարի կեսերին Գտչավանքն ընդարձակվում է, ավելանում են նոր շինություններ: Մելիք Եգանի իշխանության օրոք դա դառնում է ժամանակաշրջանի նշանավոր վանական համալիրներից մեկը, իսկ XV դարում՝ նաև մշակութային կենտրոն, որն ուներ գրչատուն, որտեղ հավաքվում էին ժամանակի նշանավոր գրչագիրները: 1868 թ. երկրաշարժի հետևանքով Գտչավանքն ավերվում և լքվում է: Վերականգնման աշխատանքներն իրականացվել են 2005-2007 թթ.[69]: Նորոգվել են գլխավոր եկեղեցու թմբուկն ու վեղարը, խաչաթևերի և գավթի տանիքները: Վերականգնման աշխատանքները ավարտին չեն հասցվել: Համալիրի երկրորդ եկեղեցին այդպես էլ մնացել է կիսավեր վիճակում: 44-օրյա պատերազմի ընթացքում էական փոփոխություններ չի կրել, ներկա վիճակը հայտնի չէ[70]:

❖ ***Սուրբ Հակոբ եկեղեցին*** (կառուցվել է 2005 թ., օծվել՝ 2007 թ.) գտնվում է մայրաքաղաք Ստեփանակերտում: Կառուցվել է ամերիկահայ բարերար Ներսես Եփրեմյանի հովանավորությամբ, որը դա նվիրել է վաղամեռիկ որդու՝ Հակոբ Եփրեմյանի հիշատակին: 1991-ից հետո Արցախի թեմում, Սուրբ Հակոբից բացի, կառուցվել են ևս 11 նոր եկեղեցիներ: Դրանք են՝ Ս. Համբարձման (Բերձոր, օծվել է 1998 թ.), Ս. Նահատակաց (Աղավնո, 2002 թ.), Ս. Աստվածածին (Ասկերան, 2002 թ.), Ս. Ներսես Մեծ (Մարտունի, 2004 թ.), Ս. Սարգիս (Հարությունագոմեր, 2005 թ.), Ս. Սարգիս (Եղծահող, 2006 թ.), Ս. Անտոն (Զագլիկ, 2009 թ.), Ս. Գևորգ (Մեծ Շեն, 2011 թ.), Ս. Մարիամ Աստվածածին (Վաղուհաս, 2012 թ.), Ս. Գևորգ (Ներքին Հոռաթաղ,

[66] Արցախի գանձերը. Մարտակերտի շրջանի Մատաղիս համայնքի Եղիշե առաքյալի վանք, https://escs.am/am/news/7359
[67] Սուրբ Ստեփանոս եկեղեցի, Տող, ԼՂՀ (Հայաստան), https://www.building.am/arm/buildings-index/surb-stepanos-church-togh-nkr-armenia/
[68] Գտչավանք, https://armland.am/hy/2022/10/09/gtchavank/
[69] Արցախի գանձերը. Գտչավանք, https://escs.am/am/news/7330
[70] Գտչավանքի վանական համալիրը, https://monumentwatch.org/hy/monument/գտչավանքի-վանական-համալիրը/

2012 թ.), Ս. Հովհաննես Մկրտիչ (Քարագլուխ, 2013 թ.) եկեղեցիները: 2019 թ. ապրիլի 7-ին տեղի է ունեցել Ստեփանակերտի Ս. Աստվածամոր Հովանի եկեղեցու (բարձրությունն ավելի քան 40 մ) օծումը[71]:

Արցախում կան նաև այնպիսի եկեղեցիներ, որոնք ավերված էին կամ կիսավեր, ինչպես, օրինակ, Բռի եկեղեցին՝ Հացի գյուղում, Թաղասերի անապատը՝ Հադրութի շրջանի Թաղասեր գյուղի մոտ, Խաթրավանքը՝ Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղից արևմուտք, Թարթառ գետի աջ ափին, Կարմիրավանը՝ Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղի մոտ, Հակոբավանքը՝ Մարտակերտի շրջանի Քոլատակ գյուղի մոտ, Հանդաբերդը՝ Շահումյանի շրջանի Քնարավան գյուղի մոտ, Հավապտուկ վանքը՝ Մարտակերտի շրջանի Վանք գյուղից 5 կիլոմետր հարավ, բարձր լեռան գագաթին, Հոռեկա վանքը՝ Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղից մոտ 5 կմ հարավարևմուտք, Մայրաքաղաք կամ Տիրամայր վանքը՝ Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղում, Պտկաթաղի վանքը՝ Հադրութի շրջանի Ծակուռի գյուղում, Օխտը դռնի վանքը՝ Հադ-րութի շրջանում՝ Յուղուսեն լեռան լանջին, Օխտը եղցին՝ Ասկերանի շրջանի Պտրեցիք գյուղի տարածքում, Օձկա վանքը՝ Ասկերանի շրջանի Բաղարա գյուղի մոտ, Օջախ եկեղեցին՝ Մարտունու շրջանի Հաղորտի գյուղում և այլն:

Հարկ է նշել, որ զբոսաշրջիկներն առավելապես այցելում էին Շուշի, Գանձասար, Դադիվանք, Ամարաս, Տողի մելիքական ապարանք և այլն:

Ադրբեջանի կողմից Արցախի պատմամշակութային ժառանգության ոչնչացումը

2020 թ. 44-օրյա պատերազմից հետո Ադրբեջանի տիրապետության տակ անցած տարածքներում սկսվեց Արցախի մշակութային ժառանգության ոչնչացման գործընթացը, որը շարունակվում է մինչ օրս: Թիրախում հայտնվեցին թե՛ Արցախի քրիստոնեական-հոգևոր ժառանգության օբյեկտները, թե՛ վերջին 30 տարվա ընթացքում Հայոց ցեղասպանությանը, Հայրենական պատերազմին, Արցախյան հերոսամարտին նվիրված ժառանգությունը և թե՛ ժամանակակից մշակութային արժեքները: Բացի դրանից, տեղի է ունենում հայկական մշակույթի «աղվանացում», այսինքն՝ մերժվում է եկեղեցիների և այլ հուշարձանների հայկական պատկանելությունը՝ վերագրվելով աղվանականին[72]:

Շուշիում հենց ռազմական գործողությունների ընթացքում մեծ վնասներ էր կրել Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցին: Պատերազմից ամիսներ անց հայտնի դարձավ, որ ադրբեջանցիները

[71] Անկախությունից ի վեր Արցախում 12 եկեղեցի է կառուցվել, 4-ի շինարարությունն էլ ընթացքում է, https://hetq.am/arm/news/64015/ankakhutyunic-i-ver-arcakhum-12-ekexeci-e-karucvel-4-i-shinararutyunn-el-yntacqum-e.html

[72] Արցախի կորսված հուշարձանները՝ շարունակվող վանդալիզմ. FIP, https://www.aniarc.am/2021/10/09/fip-9-october-2021/

«վերականգնում» են դա, իսկ գմբեթը հեռացվել է:

2021 թ. Google Earth-ի արբանյակային լուսանկարներից երևում էր, որ Շուշիի Կանաչ ժամ եկեղեցու վերին հատվածն ամբողջովին հարթեցված է՝ թե՛ զանգակատունը, թե՛ գմբեթը վերացված են[73]:

Այնուհետև տարածվեցին լուսանկարներ, որոնցից պարզ էր դառնում, որ Ադրբեջանը՝ վերանորոգման քողի տակ, Կանաչ ժամը վերածում է ուղղափառ եկեղեցու[74]:

2024 թ. ապրիլի 4-ին արված տիեզերական լուսանկարը վկայում է, որ ադրբեջանցիները հիմնահատակ քանդել են Կանաչ ժամը[75]:

Շուշիում ոչնչացվել է Հայոց ցեղասպանության զոհերի, Հայրենական մեծ պատերազմում և Արցախյան առաջին ազատամարտի ժամանակ զոհվածների հիշատակը հավերժացնող հուշարձանը: Վանդալիզմի է ենթարկվել և քանդվել Շուշիի քաղաքապետարանի դիմաց տեղադրված՝ ՀՀ ազգային հերոս Վազգեն Սարգսյանի արձանը:

44-օրյա պատերազմից հետո ադրբեջանցիներն ավերել են Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղի «Վերածնված Թալիշ» հուշարձանը[76]:

Բերձորի Սուրբ Համբարձման եկեղեցին հիմնահատակ վերացվել է[77]:

Արցախի Հադրութի շրջանի Մեծ Թաղեր գյուղում ադրբեջանցիները ոչնչացրել են ԽՍՀՄ ավիացիայի մարշալ, ծնունդով արցախցի Արմենակ Խանփերյանցի (Սերգեյ Խուդյակով) կիսանդրին: Նախքան պատերազմն արված արբանյակային լուսանկարներում երևում են և՛ մարշալի կիսանդրին, և՛ տուն-թանգարանի տարածքում գտնվող «ՄիԳ-17» կործանիչը: Սակայն, պատերազմից ամիսներ անց արված լուսանկարներում նույն տարածքում բացակայում է Արմենակ Խանփերյանցի կիսանդրին, իսկ նրա «ՄիԳ-17» կործանիչը մասամբ ջարդված է, կողքի դեն նետված[78]:

2023 թ. մարտին համացանցում տեսանյութեր հայտնվեցին, թե ինչպես է քանդվում Արցախի Ազգային ժողովի շենքը, որը կառուցվել էր 2003-2007 թթ.[79]:

[73] Ադրբեջանցիներն ավերել են Շուշիի Կանաչ ժամը, այն վերածվում է ուղղափառ եկեղեցու, ահազանգում են Արցախից, https://www.azatutyun.am/a/31930214.html

[74] CaucasusHeritageWatch, https://twitter.com/CaucasusHW/status/1781024819296833764/photo/1, Ադրբեջանը հիմնահատակ քանդել է Շուշիի Կանաչ ժամ եկեղեցին, https://www.aysor.am/am/news/2024/04/19/

[75] Արցախի կորսված հուշարձանները՝ շարունակվող վանդալիզմ. FIP, https://www.aniarc.am/2021/10/09/fip-9-october-2021/

[76] Ադրբեջանը հիմնահատակ ոչնչացրել է Բերձորի Ս. Համբարձման եկեղեցին, https://monumentwatch.org/hy/alerts/ադրբեջանը-հիմնահատակ-ոչնչացրել-է-բեր/

[77] Արցախում ադրբեջանցիները ոչնչացրել են ԽՍՀՄ մարշալ Խանփերյանցի արձանը և կողաշրջել նրա ՄիԳ-17 կործանիչը, https://war.karabakhrecords.info/2021/08/20/in-artsakh-azerbaijanis-destroyed-the-statue-of-marshal-khudyakov/

[78] Ադրբեջանը շարունակում է Ստեփանակերտի ապահայկականացման գործընթացը. քանդվել են Արցախի Ազգային ժողովի և Ազատամարտիկների միության շենքերը, https://monumentwatch.org/hy/ադրբեջանը-շարունակում-է-ստեփանակերտ/

[79] Հայքի մշակույթի Օմբուդսմեն -Ombudsman of Culture of Hayk, https://www.facebook.com/photo/?fbid=294088903695284&set=pcb.294088273695347

Ադրբեջանական կողմն ավերել է նաև Արցախի ազատամարտիկների միության շենքը, որը շահագործման էր հանձնվել և պաշտոնապես բացվել 2014 թ.[80]:

2024 թ. մարտին համացանցում լուսանկարներ տարածվեցին Արցախի մեր սրբավայրերից մեկի պղծման ողորմելի դեպքի վկայությամբ, երբ դիմակավոր անձը հեգնական կեցվածքով նստել էր Ստեփանակերտի Սուրբ Աստվածածին առաջնորդանիստ եկեղեցու խորանին տեղադրված գահի վրա:



Ադրբեջանցիները տապալել են Ստեփանակերտի մերձակայքում՝ Դաշուշեն գյուղի մոտ գտնվող բլուրներից մեկի վրա կանգնեցված 50-մետրանոց լուսատու խաչը:

Ասկերանի շրջանի Խրամորթ գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցին օգտագործվում է որպես պահեստ՝ տարբեր իրեր, հատկապես պլաստիկ շշեր պահելու համար[81]:

2020 թ. դեկտեմբերից սկսած՝ ադրբեջանցի վանդալները ոչնչացնում են Թալիշի և Մատաղիսի հայկական հուշարձանները: Monument Watch անկախ ակադեմիական հարթակը հայտնել է Բերձոր քաղաքի Փառքի հուշահամալիրի ոչնչացման, Արցախի Հադրութի շրջանի Ուխտաձոր գյուղի՝ արցախյան ազատամարտին նվիրված հուշարձանի և խաչքարի ավերման, Քաշաթաղի շրջանի Աղանուս գյուղի աղբյուր-հուշարձանի քանդման, Անատոլի Զինևիչի կիսանդրու ոչնչացման, Մարտակերտ քաղաքի հուշարձան-խաչքարի ավերման, Հաթերքի եղբայրական գերեզմանատան պղծման մասին:

Ադրբեջանի մշակութային ցեղասպանության թիրախում են հայտնվել՝ Ավետարանոցի հուշահամալիրը, Արցախի հերոս Աշոտ Ղուլյանի հուշաքարը, Արցախի Հադրութի շրջանի Հակակու գյուղի զոհվածների հիշատակին նվիրված համալիրը, Արցախի Շուշիի շրջանի Քարին տակ գյուղում Հայրենական Մեծ պատերազմի և արցախյան պատերազմի զոհերին նվիրված հուշարձանը, Հադրութի շրջանի Ազոխ գյուղի՝ Հայրենական, Արցախյան պատերազմներում զոհվածների և ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրը, Ակնաղբյուրում՝ Արցախյան պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանը, Արցախյան ազատամարտում զոհված գետավանցի ազատամարտիկների հիշատակին նվիրված հուշահամալիրը[82]:

2020 թ. սեպտեմբերի 27-ից ի վեր Ադրբեջանն ավերել է Արցախի տասնյակ եկեղեցիներ, գերեզմանոցներ, տաճարներ և այլ ճարտարապետական հուշարձաններ: 2021 թ.-ին Ադրբեջանի իշխանություններն ավերել էին Հադրութի շրջանի Մեծ Թաղեր գյուղի Մանկավարժների պուրակը, Մակուն կամուրջը, դպրոցներ, հուշարձաններ, Հադրութի շրջանի XVIII-XIX դարերի

[80] Վանդալիզմի հերթական դրսևորումը օկուպացված Արցախում, https://artsakhdiocese.am/news/vandalizmi-hertakan-drsevorumy-okupatsvats-artsakhum

[81] Ադրբեջանը ոչնչացնում է Արցախի հուշարձանները, հերոսների փառքի սրահները, պղծում եղբայրական գերեզմանատները, https://hayqnews.am/?p=6428&fbclid=IwAR1gdIgEcAgXgfOOodh5ePws6RGWyMh0gyDTbUroO_jR61sML-ROhfEbCDkM

[82] Ադրբեջանցիները հեռացրել են Արցախի Շահումյանի շրջանի Ծար գյուղի խաչքարը, https://armeniatoday.news/hy/republicofartsakh/723367/

Սուրբ Սարգիս եկեղեցին, Ասկերանի շրջանի Մադաթաշեն գյուղի դպրոցը, հայկական գերեզմանոցներ Հադրութի շրջանի Սղնախ և Հին Թաղեր գյուղերում: 2021 թ.-ից մինչև 2023 թ. քանդվել էին Իշխանագետի 1835 թ. Հալիվոր կամուրջը, պղծվել Հադրութի եկեղեցին, ապամոնտաժել Ստեփան Շահումյանի արձանը՝ տեղադրված Ստեփանակերտի հրապարակում: Monument Watch-ը 2024-ի սկզբից մինչ օրս հայտնել էր նաև Արցախի Քաշաթաղի շրջանում Ադրբեջանի կողմից խաչքար-հուշաղբյուրի ոչնչացման, Հաթերքի եղբայրական գերեզմանատան պղծման, Արցախի Հին Շեն բնակավայրի գերեզմանոցի ոչնչացման, Ստեփանակերտի Անդրանիկի փողոցում տեղադրված քանդակների վանդալիզմի մասին: 2024 թ. փետրվարի 14-ին «Հայքի մշակույթի Օմբուդսմեն» կազմակերպությունն ահազանգել էր, որ Ադրբեջանը հեռացրել է Ստեփանակերտում տեղադրված՝ գրող Հակոբ Հակոբյանի, այնուհետև ադմիրալ Հովհաննես Իսակովի կիսանդրիները[83], Խորհրդային Միության նշանավոր զորահրամանատար, Խորհրդային Միության մարշալ, ԽՍՀՄ պաշտպանության փոխնախարար, ԽՍՀՄ կրկնակի հերոս Հովհաննես Խաչատուրի Բաղրամյանի արձանը[84]:

Ադրբեջանցիներն ավերել են Արցախյան ազատամարտում զոհված հայ զինծառայողներին նվիրված հուշահամալիրը Շահումյանի շրջանի Ծար գյուղում, անհետացրել 1224 թ. արձանագիր խաչքարը[85]:

Ադրբեջանցիները քանդել են Հադրութ քաղաքի մի քանի թաղամաս, տեղի կենտրոնական գրադարանը, ավերել տվյալ շրջանի մի շարք գյուղեր[86]:

2023 թ. նոյեմբերի 23-ին Իլհամ Ալիևի հրամանագրով ստեղծվել է «Ղարաբաղի համալսարանը», որը պետք է գործի 2024 թ. սեպտեմբերից՝ Ստեփանակերտ քաղաքում, Արցախի պետական համալսարանի շենքում: Ներկայում այդ տարածքում ընթանում են շինարարական աշխատանքներ.հեռացվել է երեսպատումը, որն արվել էր շենքի վերջին վերանորոգման ժամանակ[87]:

«Caucasus Heritage Watch»-ի՝ 2024 թ. հունիսի 24-ին հրապարակած զեկույցը՝ նվիրված հայկական մշակութային վայրերին, վկայակոչում է, որ *Արցախի տարածքում Ադրբեջանի թիրախում հայտնըված մշակութային ժառանգության ավերածությունների թիվը 2023 թ. աշնանից ի վեր աճել է 75%-ով*[88]:

Արցախի իսլամացման գործընթացում կարևոր տեղ ունի Շուշի քաղաքը, որը ներկայացվում է որպես ադրբեջանական մշակութային և քաղաքական առաջնային կենտրոն, ինչպես նաև մզկիթաշինության կարևորագույն օրրան: Շուշին հայտարարվել է 2024 թ. իսլամական աշխարհի մշակութային մայրաքաղաք: Նոր մզկիթներ են կառուցվում Շուշիում, Հադրութում, Քարին տակում, Մատաղիսում, Բերձորում, Զանգելանում[89]:

Վերջին շրջանում Ադրբեջանն ակտիվացրել է հայկական ժառանգության յուրացման քաղաքականությունը միջազգային տարբեր հարթակներում՝ կազմակերպելով ցուցահանդեսներ, դասախոսություններ և գիտական լսումներ: Օրինակ՝ Լատվիայում բացված ցուցահանդեսի ժամանակ արցախյան գորգերը, որոնք աչքի են ընկնում հայկական ինքնատիպ զարդանախշերով ու խորհրդաբանությամբ, ներկայացվում են որպես Ադրբեջանի ավանդական գորգագործության մշա-

[83] Արցախում շարունակում են ոչնչացնել Հայրենական մեծ պատերազմին առնչվող համալիրներն ու արձանները, https://yerkir.am/hy/article/2024/03/10/26556?fbclid=IwAR37PFeL3oFuSxhm33HxMQVjiS4sBxDRbMvL-hNUA9cL39-H7uebRaCfv9k

[84] Ադրբեջանցիները հեռացրել են Արցախի Շահումյանի շրջանի Ծար գյուղի խաչքարը, https://armeniatoday.news/hy/republicofartsakh/723367/

[85] Արցախը՝ Ադրբեջանի բռնազավթումից հետո, մաս 1՝ Հադրութ, https://www.civilnet.am/news/777024/

[86] Ադրբեջանը «նոր համալսարան» ստեղծելու պատրվակի տակ քանդում և ձևախեղում է Արցախի պետական համալսարանի շենքը, https://monumentwatch.org/hy/alerts/ադրբեջանի-նոր-համալսարան-ստեղծելո/

[87] CHW Nagorno-Karabakh Monitoring Report #7, https://indd.adobe.com/view/b1b54fc0-dce2-4eb0-ba83-eb728c49dd20

[88] Արցախի իսլամացման ադրբեջանական քաղաքականությունը, https://monumentwatch.org/hy/alerts/արցախի-իսլամացման-ադրբեջանական-քաղա/

[89] Արցախի հայկական գորգագործության եզակի զարդանախշերով գորգերի կրկնօրինակները ներկայացվում են Լատվիայում որպես Ադրբեջանի «գենետիկական կոդ» և պատմական հիշողություն, https://monumentwatch.org/hy/alerts/արցախի-հայկական-գորգագործության-եզա/

90 Արցախի հայկական գորգագործության եզակի զարդանախշերով գորգերի կրկնօրինակները ներկայացվում են Լատվիայում որպես Ադրբեջանի «գենետիկական կոդ» և պատմական հիշողություն, https://monumentwatch.org/hy/alerts/արցախի-հայկական-գորգագործության-եզա/

կույթ[90]: Վարշավայում բացվել է «Ադրբեջանի քրիստոնեական բազմազան պատմության բացահայտումը» վերտառությամբ ցուցահանդեսը, որտեղ հայկական պատմական քրիստոնեական եկեղեցիները ներկայացվում են որպես «Ղարաբաղի աղվանական քրիստոնեական տաճարներ»[91]:

Վերոնշյալը Ադրբեջանի կողմից իրականացվող ավերածությունների և իրականության ձևախեղման քաղաքականության շատ փոքր մասն է միայն:

Վտանգված են բոլոր պատմամշակութային հուշարձանները, որոնք թշնամին շարունակաբար պղծում և ոչնչացնում է՝ հայկական հետքը ջնջելու նպատակով: Իհարկե, շատ դեպքերում հայկական պատմամշակութային ժառանգությունը ներկայացվում է որպես ադրբեջանական կամ աղվանական, ալբանական կամ ուդիական և այլն:

Յուրաքանչյուր ժողովրդի մշակութային արժեքներին հասցվող վնասը հարված է ողջ մարդկության մշակութային ժառանգությանը, քանզի յուրաքանչյուր ժողովուրդ իր ներդրումն ունի համաշխարհային մշակութային բազմազանության մեջ: Ըստ 1954 թ. Հաագայի կոնվենցիայի՝ մշակութային արժեքը «….անկախ ծագումից կամ սեփականատիրոջից, յուրաքանչյուր ժողովրդի համար մեծ նշանակություն ունեցող շարժական կամ անշարժ ժառանգությունն է, ինչպիսիք են ճարտարապետության, արվեստի կամ պատմության հուշարձանները՝ անկախ դրանց կրոնական կամ աշխարհիկ բնույթից»: Համաձայն «Զինված հակամարտությունների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության մասին» 1954 թ. Հաագայի կոնվենցիայի 4-րդ հոդվածի՝ արգելված է մշակութային ժառանգության հանդեպ վանդալիզմի, գողության, կողոպուտի, յուրացման, թշնամանքի և հաշվեհարդարի ամեն մի գործողություն: Ըստ Հաագայի 1954 թ. առաջին արձանագրության՝ արգելված է գրավյալ տարածքներում ոչնչացնել մշակութային կամ հոգևոր արժեքները: Մշակութային ժառանգության նմանօրինակ դիտավորյալ ոչնչացման քաղաքականությունը դատապարտվում է նաև «Մշակութային ժառանգությունը դիտավորյալ ոչնչացնելու մասին» ՅՈՒՆԵՍԿՕ-ի 2003 թվականի հռչակագրով[92]:

Ցավոք, այս ընթացքում համոզվում ենք, որ ՅՈՒՆԵՍԿՕ-ն նույնպես անզոր է կանխելու հայկական մշակութային ժառանգության նպատակային ոչնչացումն Ադրբեջանի կողմից:

Միջազգային կառույցների անզորությունը կամ անգործությունը Ադրբեջանի կողմից վարվող քաղաքականության դեմ, ինչ խոսք, մտահոգիչ է, ու, ցավոք, մեզ մնում է միայն արձանագրել և բարձրաձայնել Ադրբեջանի կողմից վարվող մշակութային ցեղասպանության մասին:

[91] Վարշավայում կազմակերպված միջազգային ցուցահանդեսում Արցախի պատմական հայկական եկեղեցիները ներկայացվում են որպես աղվանական, https://monumentwatch.org/hy/alerts/վարշավայում-կազմակերպված-միջազգային/

[92] Ադրբեջանը տապալել է Ստեփանակերտի խաչը, https://monumentwatch.org/hy/alerts/ադրբեջանը-տապալել-է-ստեփանակերտի-խաչ/

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ադրբեջանը հեռացրել է Վանքասարի եկեղեցու խաչը, https://monumentwatch.org/hy/alerts/ադրբեջանը-հեռացրել-է-վանքասարի-եկեղե/
2. Ադրբեջանը հիմնահատակ ոչնչացրել է Բերձորի Սուրբ Համբարձման եկեղեցին, https://monumentwatch.org/hy/alerts/ադրբեջանը-հիմնահատակ-ոչնչացրել-է-բեր/
3. Ադրբեջանը հիմնահատակ քանդել է Շուշիի Կանաչ ժամ եկեղեցին, https://www.aysor.am/am/news/2024/04/19/
4. Ադրբեջանը շարունակում է Ստեփանակերտի ապահայկականացման գործընթացը. քանդվել են Արցախի Ազգային ժողովի և Ազատամարտիկների միության շենքերը, https://monumentwatch.org/hy/alerts/ադրբեջանը-շարունակում-է-ստեփանակերտ/
5. Ադրբեջանը ոչնչացնում է Արցախի հուշարձանները, հերոսների փառքի սրահները, պղծում եղբայրական գերեզմանատները,

https://hayqnews.am/?p=6428&fbclid=IwAR1gdI-gEcAgXgfOOodh5ePws6RGWyMh0gyDTbUroO_jR61sMLROhfEbCDkM
6. Ադրբեջանը «նոր համալսարան» ստեղծելու պատրվակի տակ քանդում և ձևախեղում է Արցախի պետական համալսարանի շենքը, https://monumentwatch.org/hy/alerts/ադրբեջանի-նոր-համալսարան-ստեղծելո/
7. Ադրբեջանցիները հեռացրել են Արցախի Շահումյանի շրջանի Ծար գյուղի խաչքարը, https://armeniatoday.news/hy/republicofartsakh/723367/
8. Ադրբեջանցիներն ավերել են Շուշիի Կանաչ ժամը, այն վերածվում է ուղղափառ եկեղեցու, ահազանգում են Արցախից, https://www.azatutyun.am/a/31930214.html
9. Ազոխի քարանձավ, http://findarmenia.org/arm/sights/azokh
10. Ազոխի քարանձավի գաղտնիքները, https://armland.am/hy/2022/09/02/azokhi-qarandzav/
11. Այվազյան Ս., Դադիվանքի վերականգնումը 1997-2011 թթ., Եր., ՀՃՈՒ հրատ., 2015 թ., 130 էջ:
12. Ամարաս, https://armland.am/hy/2023/11/27/am-amaras-monastery/
13. Ամարասի վանքն օկուպացված է. Ադրբեջանը պարտավոր է պահպանել օկուպացված տարածքներում մշակութային ժառանգության պահպանության միջազգային դրույթները, https://monumentwatch.org/hy/alerts/ամարասի-վանքն-օկուպացված-է.-ադրբեջան/
14. Անկախությունից ի վեր Արցախում 12 եկեղեցի է կառուցվել, 4-ի շինարարությունն էլ ընթացքում է, https://hetq.am/arm/news/64015/ankakhutyunic-i-ver-arcakhum-12-ekexeci-e-karucvel-4-i-shi-nararutyunn-el-yntacqum-e.html
15. Ասկերանի բերդ-Մայրաբերդ, https://armland.am/hy/2018/10/18/askeran/
16. Արցախ, թե՞ Ղարաբաղ, https://armland.am/hy/2022/09/24/artsakh-karabakh/
17. Արցախը՝ Ադրբեջանի բռնազավթումից հետո. մաս 1՝ Հադրութ, https://www.civilnet.am/news/777024/
18. Արցախի Ալեքսանա Ղուզե քարանձավը նոր հուշարձան է ոչ միայն մեր տարածաշրջանի, այլև Եվրոպայի համար. լեհ մասնագետ, https://artsakhpress.am/arm/news/51690/
19. Արցախի գանձերը. Գտչավանք, https://escs.am/am/news/7330
20. Արցախի գանձերը, Ծիծեռնավանք, https://escs.am/am/news/7336
21. Արցախի գանձերը. Մարտակերտի շրջանի Մատաղիս համայնքի Եղիշե առաքյալի վանք, https://escs.am/am/news/7359
22. Արցախի թեմ, եկեղեցիներ ու վանքեր՝ ըստ շրջանների, https://artsakhdiocese.am/map
23. Արցախի թոփ 5 չբացահայտված գանձերը. հուշումներ զբոսաշրջիկին, https://armeniasputnik.am/tourism/20180701/12984970/turisti-uxecuyc-artsakh.html
24. Արցախի իսլամացման ադրբեջանական քաղաքականությունը, https://monumentwatch.org/hy/alerts/արցախի-իսլամացման-ադրբեջանական-քաղա/
25. Արցախի կորսված հուշարձանները՝ շարունակվող վանդալիզմ, FIP, https://www.aniarc.am/2021/10/09/fip-9-october-2021/
26. Արցախի հայկական գորգագործության եզակի զարդանախշերով գորգերի կրկնօրինակները ներկայացվում են Լատվիայում որպես Ադրբեջանի «գենետիկական կոդ» և պատմական հիշողություն, https://monumentwatch.org/hy/alerts/արցախի-հայկական-գորգագործության-եզա/
27. Արցախի Հանրապետության կառավարության 2018 թ. մայիսի 11-ի N346-Ն որոշում, http://www.arlexis.am/DocumentView.aspx?docid=15354
28. Արցախի սպիտակաթև չղջիկների միակ հանգրվանը, https://hushardzan.am/archives/12360
29. Արցախի Տիգրանակերտ, http://findarmenia.org/arm/sights/tigranakert
30. Արցախի Տիգրանակերտ, պեղումները, http://www.tigranakert.am/excavations/
31. Արցախի Տնջրի ծառը, https://armland.am/hy/2022/07/06/tnjri/
32. Արցախում ադրբեջանցիները ոչնչացրել են ԽՍՀՄ մարշալ Խանփերյանցի արձանը և կողաշրջել նրա ՄիԳ-17 կործանիչը, https://war.karabakhrecords.info/2021/08/20/in-artsakh-azerbaijanis-destroyed-the-statue-of-marshal-khudyakov/
33. Արցախում գտնվել են մելիքների տապանաքարեր, https://hushardzan.am/archives/15084
34. Արցախում շարունակում են ոչնչացնել Հայրենական մեծ պատերազմին առնչվող համալիրներն ու արձանները, https://yerkir.am/hy/article/2024/03/10/
35. Բալայան Վ., Արցախի Հանրապետության բնակավայրերի պատմության ուրվագծեր: Մենագրություն, Եր.: «Զանգակ» հրատ., 2020, 752 էջ, http://www.historyofarmenia-am.armin.am/images/menus/2767/Balayan1.pdf
36. Գանձասարի վանքն անկախության տարիներին, https://monumentwatch.org/hy/monument/գանձասարի-վանքն-անկախության-տարիներ/

37. Գանձասարի բռնայուրացումը սկսված է, https://monumentwatch.org/hy/alerts/գանձասարի-բռնայուրացումն-սկսված-է/
38. Գտչավանք, https://armland.am/hy/2022/10/09/gtchavank/
39. Գտչավանքի վանական համալիրը, https://monumentwatch.org/hy/monument/գտչավանքի-վանական-համալիրը/
40. Դադիվանք. Սուրբ Դադիի և նրա գերեզմանի մասին, https://monumentwatch.org/hy/monument/դադիվանք-սուրբ-դադիի-և-նրա-գերեզմանի-մ/
41. Դիզափայտ լեռ, https://armland.am/hy/2022/09/27/dizapayt-ler/
42. Երից մանկանց վանքը, https://monument-watch.org/hy/monument/երից-մանկանց-վանքը/
43. Թովմասյան Գ., Կրոնական զբոսաշրջության զարգացման նախադրյալները Արցախի Հանրապետությունում, «ԲԱՆԲԵՐ ՀՊՏՀ», 2019/4, էջ 93-107, https://asue.am/upload/files/science/ban-ber/2019-year-4/2019.4.%207.pdf
44. Թովմասյան Գ., Զբոսաշրջային ռեսուրսների ինչ հարստություն կորցրեց Արցախը, «Ամբերդ» տեղեկագիր, 2020/6, էջ՝ 22-33, https://asue.am/upload/files/amberd/Տեղեկագիր%206.pdf
45. Ինչո՞ւ չեն տարհանվել Շուշիի թանգարանների նմուշները. փոխադարձ մեղադրանքներ և նմուշների անորոշ ապագա: ՏԵՍԱՆՅՈՒԹ, https://factor.am/313291.html
46. ԼՂՀ հուշարձանների տեղեկատվական շտեմարան, եկեղեցի Ս. Աստվածածին, http://www.monuments.nkr.am/pages.php?al=home&id=994&act1=more&d=32
47. Ծիծեռնավանք, Արցախի գանձերը, https://armland.am/hy/2022/09/02/tsitsernavank/
48. Կաչաղակաբերդ, https://armland.am/hy/2021/06/12/kachaghakab-erd-fortress/
49. Կարապետյան Ս., Արցախի հրաշալիք-ները, Եր., ՀՃՈՒ հրատ., 2010, 35 էջ:
50. Կարապետյան Ս., Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջա-նին բռնակցված շրջաններում, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999, 288 էջ:
51. Կատարո վանքի եկեղեցու օգտագործումը ռազմական նպատակներով, https://monumentwatch.org/hy/alerts/կատարո-վանքի-եկեղեցու-օգտագործումը-ռ/
52. Կրոնական, https://karabakh.travel/hy/reli-gious/36/
53. Հայքի մշակույթի Օմբուդսմեն -Ombuds-man of Culture of Hayk, https://www.facebook.com/photo/?f-bid=294088903695284&set=p-cb.294088273695347
54. Հասրաթյան Մ., Շուշիի Ղազանչեցոց Ս. Ամենափրկիչ եկեղեցի, http://www.armenianreligion.am/am/Encyclope-dia_of_armenian_religion_shushii_ghazanchet-sots_s_amenaprkich_yekeghetsi
55. Հունոտի կիրճ. Արցախի գեղեցկուհիներից մեկը, https://hushardzan.am/archives/11243
56. Հունոտի կիրճ, https://www.armgeo.am/hunot-canyon/
57. Հունոտի կիրճ. Արցախի գեղեցկուհիներից մեկը, https://hushardzan.am/archives/11243
58. Մեծ Քիրս լեռ, https://armland.am/hy/2020/05/04/mountqirs/
59. Ճանապարհորդություն դեպի Արցախ. վայրեր Շուշիում, որոնց մասին Դուք չգիտեիք, և որոնք անպայման պետք է տեսնել, https://www.orer.am/?p=219936&l=am
60. Շահումյանի շրջանի Զուարի տաք ջուր, https://aartsakh.wordpress.com/2016/01/07/
61. Շուշի. Կանաչ ժամ կամ Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցի, https://hushardzan.am/archives/11153
62. Շուշիի Բերդ, http://www.360greatarmenia.am/hy/shushi-forterss
63. Շուշիի գորգերի թանգարանում մշտական ցուցադրության է ներկայացված 120 գորգ, https://artsakhpress.am/arm/news/77303/
64. Շուշիի կերպարվեստի պետական թանգարանը, https://monumentwatch.org/hy/2023/09/12/
65. Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցին, https://monumentwatch.org/hy/monument/շուշիի-սբ.-ամենափրկիչ-ղազանչեցոց-եկե/
66. Շուշիում բացվել է հայկական դրամի թանգարան (լուսանկարներ), https://artsakhpress.am/arm/news/86159/arme-nian-dram-museum-opened-in-shushi--photos.html
67. Շուշի քաղաքի թանգարաններ, https://arites.am/hy/shushimuseums
68. Շուշի քաղաքի պատմության թանգարան, https://monumentwatch.org/hy/2023/07/24/
69. Պետրոսյան Հ., Մուրադյան Հ., Արցախի մշակութային ժառանգությունը հարձա-կումների թիրախում, Երևան, 2022, 58 էջ, https://monumentwatch.org/wp-content/up-loads/2022/08/Պետրոսյան-Հ.-Մուրադյան-Հ.-Արցախի-մշակութային-ժառանգությունը-հարձակումների-թիրախում.pdf
70. Սուրբ Հովհաննես եկեղեցի, Տող, ԼՂՀ (Հայաստան), http://www.building.am/arm/buildings-index/surb-hovhannes-church-togh-nkr-armenia/
71. Վանդալիզմի հերթական դրսևորումը

օկուպացված Արցախում,
https://artsakhdiocese.am/news/vandalizmi-hertakan-drsevorumy-okupatsvats-artsakhum
72. Վարշավայում կազմակերպված միջազգային ցուցահանդեսում Արցախի պատմական հայկական եկեղեցիները ներկայացվում են որպես աղվանական,
https://monumentwatch.org/hy/alerts/վարշավայում-կազմակերպված-միջազգային/
73. Տիգրանակերտը գրավոր աղբյուրներում,
http://www.tigranakert.am/city/
74. Տիգրանակերտի պետական հնագիտական թանգարան,
https://hushardzan.am/archives/19854
75. Տողի մելիքական ապարանքը,
https://monumentwatch.org/hy/monument/տողի-մելիքական-ապարանքը/
76. «Տողի մելիքական ապարանք» պատմամշակութային արգելոց-թանգարանը,
https://monumentwatch.org/hy/2023/12/14/
77. Քրիստոնյա Հայաստան հանրագիտարան, գլխ. խմբ. Հովի. Այվազյան, Հայկական հանրագիտարան հրատ., Եր., 2002, էջ 44-45:
78. Օհանյան Ս. Ն., Դադիվանք. լեռնային երկրի գոհարը, «Տնտեսագետ» ամսագիր, 2017 / N1, Եր., էջ 44-46:
79. Օհանյան Ս. Ն., Վերծանելով արվեստի գաղտնագրերը: Փիլիսոփայական մտորումներ: Մաս առաջին, «Տնտեսագետ» ամսագիր, Եր., 2017, էջ 27-36:
80. Мкртчян Ш., Давтян Щ., Шуши город трагической судьбы, Амарас, Ереван, 1997, стр. 18-21.
81. Caucasus Heritage Watch,
https://twitter.com/CaucasusHW/status/1781024819296833764/photo/1
82. CHW Nagorno-Karabakh Monitoring Report #7,
https://indd.adobe.com/view/b1b54fc0-dce2-4eb0-ba83-eb728c49dd20

Гаяне ТОВМАСЯН
Старший исследователь исследовательского центра «Амберд», АГЭУ, кандидат экономических наук, доцент

БЕЗОПАСНОСТЬ И ВЫЗОВЫ

ПРИРОДНЫЕ, КУЛЬТУРНЫЕ И ДРУГИЕ ТУРИСТИЧЕСКИЕ РЕСУРСЫ АРЦАХА И УНИЧТОЖЕНИЕ КУЛЬТУРНОГО НАСЛЕДИЯ АРЦАХА АЗЕРБАЙДЖАНОМ

Арцах – неотъемлемая часть исторической Армении, вторая армянская страна. Арцах богат природными, историческими, культурными и другими ресурсами, имеющими огромный туристический потенциал. После войны, разразившейся осенью 2020 года, вместе с потерей территорий Арцаха мы лишились и огромного туристического ресурса. В сентябре 2023 года Арцах был полностью обезлюден.

В статье представлены некоторые элементы природного, культурного и религиозного наследия Арцаха. Также представлены факты уничтожения Азербайджаном историко-культурного наследия Арцаха, которые должны быть представлены и подняты на различных международных площадках в целях предотвращения проводимой Азербайджаном политики культурного геноцида.

Ключевые слова: *Республика Арцах, историко-культурное наследие, природное наследие, религиозные сооружения, вандализм, культурный геноцид, ЮНЕСКО*

Gayane TOVMASYAN
Senior researcher at «Amberd» Research center, ASUE, PhD in Economics, Associate Professor

SECURITY AND CHALLENGES

NATURAL, CULTURAL AND OTHER TOURISTIC RESOURCES OF ARTSAKH AND DESTRUCTION OF CULTURAL HERITAGE OF ARTSAKH BY AZERBAIJAN

Artsakh is an integral part of historical Armenia, the second Armenian country. Artsakh is rich in natural, historical, cultural and other resources, which have a huge tourism potential. After the war that broke out in the fall of 2020, together with the loss of the territories of Artsakh, we were also deprived of a great touristic resources. In September 2023, Artsakh was completely depopulated.

The article presents some elements of the natural, cultural and religious heritage of Artsakh. The facts of the destruction of the historical and cultural heritage of Artsakh by Azerbaijan are also presented, which should be presented and raised on various international platforms in order to prevent Azerbaijan's policy of cultural genocide.

Keywords: *Republic of Artsakh, historical and cultural heritage, natural heritage, religious structures, vandalism, cultural genocide, UNESCO*